

9(47.925

7 - 50

Աննա Պետրոսյան

ԲՈՒՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ



ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐ

ՄԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՅԻ

Պիտի անհուն սիրով ու հպարտությամբ պատմենք այս հայերի և Մխիթար Սերաստացի վարդապետի մասին։ Նա ճշմարիտ մեծ էր, ճշմարիտ առաքյալ ամենաազնվագույն իր մտածողությամբ, վարքով և վեհ գաղափարներով, որոնցով հայության մեջ նորովի հաստատեց այն մտայնությունը, թե որքան էլ նա՝ հայությունը, ընկղմվի խավարի ճահճուտը, պիտի իր ընդերքից ճառագեւ տա այն լույսը, որը պիտի նրան դուրս մղի տղմուտից՝ դեպի մաքուր օդի և պայծառ արևի անդաստան։

Արշակ Չոպանյանը, 19-րդ դարի հայ մեծ մտավորականը, գրել է.

«Կյանքը, զոր վարեց Մխիթար, նկարագրի ուժը զոր ցույց տվավ իր նպատակին հասնելու համար, այնքան մեծ են ու գեղեցիկ, որքան գործը, որ իրմե հիմնված, ի կատար հանվեցավ իր հանձարեղ հաջորդներու ձեռքովը։ Այդ կյանքը մին է մարդկությունը պատվող այն հոյակապ ոյուցազներգություններեն, ուր կտեսնենք մարդ մը, որ մին մենակ, իր հոգեկան կորովեն ուրիշ որևէ միջոց ու զենք չունենալով, ընկերական, քաղաքական, բնական ուժերուն ընդդիմադրությունը կնվաճե և կհաջողի ոչնչեն աշխարհ մը ստեղծել»։

...Մենք հասել ենք 19-րդ դարի շեմին, բայց պիտի երկու դար ետ գնանք հանդիպելու համար Նրան, որի կյանքն այսօր, այս զարմանալի ու տարօրինակ, մարդկային շատ արարքներ կասկածի ենթարկող 21-րդ դարի նորաշեմին անգամ հրատ է ու Օրինակ դանդաղորեն օտար ափերում Կենաց Հավատը կորցնող մերայինների համար։



Մխիթար Սերաստացի

1676 թվականի փետրվարի 7-ին Սերաստիա քաղաքում ծնվեց Մխիթարը։ Հայրը՝ Մանուկի որդի վաճառական Պետրոսը, և մայրը՝ Շահրիստանը, նրան մկրտության ժամանակ կնքեցին պապի՝ Մանուկի անունով։ Մխիթար անունը նա ստացավ հետո, հոգևոր կոչման հետ։ Երեխան գրել-կարդալ սովորեց հինգ տարեկան հասակում։ Նրա առաջին ուսուցիչ-քահանան խիստ տպավորվող և զգայուն երեխայի մեջ սերմանեց մի սաստիկ կրոնա-սիրություն և նույնիսկ ճգնավորների խորհրդավոր կյանքի մասին հրաշքներ պատմելով՝ ականա նրան մղեց փորձելու ճգնավորական կյանքի հրաշալիքը։ Տասը տարեկան էր, որ իր հասակակից մի երեխայի հետ ծածուկ հեռանում է տնից՝ մի քարայրում ճգնելու համար, վստահ, որ ինչպես

Հովհաննես Մկրտչին էր Աստված անապատում խնամքով կերակրում, ինքը նույնպես իր ընկերոջ հետ կերակուր կստանա Աստծո հրեշտակների ձեռքով։



Թեև երկու մանուկ ճգնավորները ամբողջ օրը ծնկաչոք աղոթեցին, սակայն երկինքն անտարբեր եղավ նրանց հանդեպ, և գիշերվա խավարն էլ իր հերթին այնպիսի սարսափով պատեց քաղցից նվաղած խեղճ երեխաների սիրտը, որ սկսեցին սրտապատառ լաց լինել և օգնություն կանչել: Եվ, վերջապես, նրանց որոնողները լսելով մանկանց սարսափահար աղաղակները՝ գտան նրանց և տուն տարան:

Բայց սա կարծես քիչ էր կրոնական հափշտակվածությամբ ապրող մանկան համար, երբ նրա կենսագրության մեջ ներխուժեցին սեբաստացի երկու քույրերը՝ **Մանասեն** և **Մարիամը**, որոնք նույնպես ճգնավորներ էին, սակայն ճգնում էին իրենց հոր սեփական տանը... Ահա, այս միանձնուհիների մոտ ուղարկեցին տասնամյա տղային: Քույրերը հագիվհագ կարդալ գիտեին և սոսկալի տգետ էին: Նրանք անընդհատ մարգարեական երազներ էին տեսնում, երազների հերոսը խեղճ փոքրիկն էր, ում արթնացնելով կեսգիշերին՝ պատմում էին՝ գուշակություններ անելով նրա ապագայի մասին:

Թվում էր, թե նման մթնոլորտում «կրթություն» ստացած պատանին պիտի նմանվեր իր ուսուցիչներին, որոնք ավելի զնայլանքի մեջ ապրող հոգեկան հիվանդների էին նման, քան լրջախոհ կրոնավորների: Հենց միայն այն, որ կույսերը, ի վերջո, կարողացան հասնել իրենց երազանքին՝ խոսում է այդ խեղճ խելապականների բնավորության մասին: Առհասարակ, ճգնավորության գերագույն երազանքը մարմինը հալածելով կեղտոտ, այլանդակ, հիվանդ, ճիվաղային մի բան դարձնելն է՝ հանուն Աստծո սիրո:



Քրիստոսի հարսներ

Բայց ինչո՞ւ Աստված պետք է հանդուրժեր այդ հոտած, վերքերով ծածկված մարմինների գարշահոտը իր մաքրամաքուր ու պայծառ, լուսեղեն դրախտում՝ անհասկանալի է... Ինչևէ. քույրերը պետք է արժանանային Աստծո բարեհաճությանը և մեռնելուց հետո պիտի չվեին դրախտ: Եվ, չբավարարվելով տան մեջ աղոթելով, գիշերները, նույնիսկ ծնեռները, դուրս էին գալիս բաց երկնքի տակ աղոթելու: Այս մոլի ինքնա-

կեղեքումը վերջապես քույրերին անկողին նետեց սոսկալի անդամալուծությամբ, կոճղերի պես շարժվելու անկարող: Նրանց փտող, շարավիտ, վերքերով պատած մարմինները հավատում էին, թե երկուսն էլ արժանացել են «**Քրիստոսի հարսներ**» լինելու բախտին:

Հետո, երբ մեռան, իրենց նման տգետ և մտքի ու սրտի խավարի մեջ խարխափող մարդկանց կողմից հռչակվեցին որպես հրաշագործ սրբեր:

Ահա այսպիսին էին մանուկ **Մխիթարի** առաջին ուսուցիչները:

Սակայն պատանի **Մխիթարն** անսահման պահանջ ուներ հոգևորի և ուրիշ

որևէ կերպ չկարողանալով բավարարում տալ այդ պահանջին՝ պիտի ձգտեր դառնալ կրոնավոր, որովհետև հոգևոր կյանքի միակ ապաստարանը այն ժամանակ համարվում էր եկեղեցին:

15 տարեկան էր Մխիթարը, երբ դարձավ Սեբաստիայի Սբ. Նշան վանքի միաբան, սկզբում դպիր, իսկ այնուհետև ձեռնադրվեց սարկավագ:

Բայց նրա որոնող միտքը նրան մղում էր առաջ՝ թույլ չտալով բավարարվել կիսատ ինքնակրթությամբ և եկեղեցական կանոններով հավատին ծառայելու իր պարտականությամբ: Նրան հեռվից հրապուրում ու կանչում էր էջմիածինը, որտեղ, գիտեր, պիտի կարողանար հարկը հարկին կրթությունն ստանալ ու կատարելագործվել:


Էջմիածնում այդ ժամանակ հայրապետական աթոռին նորընտիր կաթողիկոս **Նահապետ Առաջին Եղեսացին** էր: Նա իր գործունեության սկիզբն արդեն նշանավորել էր շինարարությամբ. կառուցել էր Օշականի կամուրջը, Մայր Աթոռի վանատունը, վերակառուցել էջմիածնի Շողակաթ եկեղեցին, վերնատունն ու հարակից շինությունները, նորոգել Երևանի, Չորագյուղի, Կոնդի, Քանաքեռի եկեղեցիները, Հրազդանից ջրանցք անցկացրել վանքապատկան հողերը ոռոգելու համար, ընդարձակել էջմիածնի վանքի կալվածքները:

Կաթողիկոսի բուռն գործունեության լուրերը միանգամայն ոգևորիչ էին պատանի սարկավագի համար:

Նա մեկնեց էջմիածին, որտեղ նրան սպասում էր ոչ թե ուսումն ու գիտությունը, այլ ծանր հիասթափությունը: Այն եպիսկոպոսը, որ նրա ուսուցիչն էր, բնավ չէր համապատասխանում իր կոչմանը:

Էջմիածինը ողջ հայության համար հոգևորականների իմաստության ու անարատ կենցաղի բնակավայր էր: Սակայն ժամանակի այդ հատվածում նրանք բավականին տգետ էին, կոպիտ ու արատավոր:

Այս եպիսկոպոսն էլ, որ հանձն էր առել նրան **«կրթել»**՝ տգետ էր և մահ գուրկ մարդասիրական զգացումից: Հեռվից եկած **Մխիթար աշակերտին** պահում էր ծառայի կարգավիճակով և որոշել էր այդպես պահել 12 տարի **«առ ոտս իւր»**, ուստի ոչինչ չէր սովորեցնում և բանեցնում էր ճորտի նման:



Սևանի կղզու վանքը

Մխիթար սարկավագը դրա համար չէր եկել էջմիածին և, բնական է, որ չհանդուրժեր անարժանապատիվ իր գոյությունը:

Նա էջմիածնից փախուստով հեռացավ Սևանի կղզու վանք, որը, պարզվեց, նորից իր փնտրածը չէր: Նա Սևանի մենաստանի ցուրտ կամարների տակ ապրեց հուսահատական այն տազնապը, որը շատերին կարող էր զրկել գործելու որևէ ձգտումից: Բայց այս պատանին



նրանցից էր, որոնց ծանր հուսահատությունը, որքան էլ որ զարմանալի է, կոփում է կամքը՝ անխոցելի դարձնելով և միտքը, և հոգին:

Հեռանալով Սևանից՝ նա ճանապարհ ընկավ դեպի ծննդավայր: Ծանապարհին Բասենի վանքի վանահայր **Մելիքսեդեկ եպիսկոպոսը** նրան խնդրում է մնալ և հանձն առնել ուսուցանել դպրավանքի աշակերտներին:

Միայն մեկ տարի մնալով Բասենի վանքում՝ վերադառնում է Սեբաստիա և Սբ. Նշան վանքում ծեռնադրվում քահանա:

Ոչ նրա թափառումները, ոչ նրա այս ու այն վանքում ծառայելը բավարարում չէին տալիս նրա մտքին ու զգացմունքներին, բավարարում չէին տալիս իր էության մեջ տարտամորեն ապրող ու հասունացող կարևոր իր երազանքին, որի անունը դեռ չէր կարողանում տալ, սակայն որի միանգամայն ամբողջական և կատարյալ հայտնությանը սպասում էր իր խոկումների պահերին:

22 տարեկան էր, երբ մեկնեց Կոստանդնուպոլիս, որը պատրիարքության կենտրոն էր և որտեղ հույս ուներ կատարելագործելու իր գիտելիքները, որպեսզի կարողանա իրագործել արդեն միանգամայն ձևավորված հոգևոր նոր միաբանություն ստեղծելու իր գաղափարը: Միաբանություն, որը պետք է դառնար ոգու և մտքի կատարյալ դպրոց: Միաբանության անդամները սոսկ ճգնափոր կրոնավորներ չպետք է լինեին, այլ ազգի լուսավորության ու զարթոնքի առաջնորդներ:

Կոստանդնուպոլսում **Մխիթարը** հանդիպում է **Խաչատուր Էրզրումցուն**, որը ժամանակի ամենախմաստուն այրերից մեկն էր: Հայրենիքում կրթություն ստանալով՝ նա ուսումը շարունակում է Հռոմի Ուրբանյան վարժարանում, խորանում իմաստասիրական և աստվածաբանական գիտությունների մեջ, կատարելագործում լեզուների իմացությունը: Ստանալով վարդապետի աստիճան՝ որպես քարոզիչ հաստատվում է Կոստանդնուպոլսում, և զբաղվում գրական-մշակութային գործունեությամբ:

Խաչատուր Էրզրումցին կաթոլիկ էր, սակայն մեծ համարում ուներ կաթոլիկոս Նահապետ Առաջին Եղեսացու մոտ, որ նրան արտոնել էր ամենուր քարոզելու իշխանություն, որովհետև Խաչատուր վարդապետը կաթոլիկ դավանություն չէր քարոզում, այլ ակնառես լինելով հայերի միջև դավանաբանական, երբեմն անպատշաճության հասնող վեճերին՝ հաշտություն և միություն էր քարոզում:

Խաչատուր կրոնավորը չէր ընդունի կաթոլիկ դավանանքը, եթե նրա ուսումնածարավ միտքը գիտությունների մեջ խորանալու համար Հայաստանում չգտնելով համապատասխան վարժարան՝ ստիպված չլիներ հասնելու Հռոմ, որտեղ լուսավորչական դավանանքի երիտասարդին բացառված էր բարձրագույն ուսում ստանալը: Սրա առաջին պայմանը կաթոլիկ դառնալն էր: Բայց, ինչպես ինքն է գրում, նա ընդմիշտ մնաց որդին **«Լուսավորչանիստ աթոռաց սրբոյ Էջմիածնի»:**

Նրա՝ ամենատարբեր բնագավառների մեկ տասնյակ աշխատություններից շատերը ժամանակին որպես դասագիրք են ծառայել հայ նորահաս սերունդների համար:



Խաչատուր վարդապետից քերականություն, ճարտասանություն, իմաստասիրություն, աստվածաբանություն և լեզուներ սովորելու դասեր է առնում նաև **Մխիթարը**: Ապա առաջարկում է իր ուսուցչին կրոնական նոր միաբանություն ստեղծել և ստանձնել նրա ղեկավարությունը: **Խաչատուր վարդապետը** խրախուսում է այս գաղափարը, սակայն հրաժարվում է ղեկավար դառնալու պատվից:

1701 թվականն էր: **Մխիթար Սեբաստացին** հավաքելով ութ աշակերտ՝ կազմում է միաբանություն և հետագա իր հռչակավոր գրական-գիտական գործունեության սկիզբը դնում: Նա Կոստանդնուպոլսի Բեյոլլի թաղամասում վարժում է մի բնակարան, որտեղ բացում է իր դպրոցը և հրատարակում կրոնական բովանդակության՝ լատիներենից թարգմանված չորս գիրք:

Սակայն **Մխիթար Սեբաստացին** կասկածվում է որպես կաթոլիկ և միջավանաբանական պայքարում ենթարկվում է հալածանքի, որից խուսափելու համար միաբանությունը տեղափոխում է Վենետիկի Հանրապետության ներքո գտնվող Հունաստանի Մորեա նահանգի Մեթոն ծովահայաց բերդաքաղաքը, որտեղ եկեղեցի են կառուցում և ապրուստի համար պարտեզ ու ձիթաստան են ձեռք բերում:

Սակայն 1715 թվականին թուրքիան պատերազմ է հայտարարում Վենետիկի Հանրապետությանը, և օսմանյան զորքերը շարժվում են Հունաստան: **Մխիթարյանները** ժամանակին կարողանում են հեռանալ:

Թուրքերը այստեղ էլ են հասնում հայերին. գրավում են Մեթոն բերդաքաղաքը, թալանում են ու քարուքանդ անում: Մխիթարյանների 14 տարիների անդուլ աշխատանքի պտուղները ոչնչանում են:

1715 թվականի ապրիլի 12-ին երեսուներկուօրյա նավարկումից հետո, երկկայմանի, բավական խարխլված «Աբ. Չիրիլո» նավը մոտեցավ Ադրիատիկ ծովի Իտալիայի ափին և խարիսխ գցեց Սուրբ Մարկոսի ծովեզերքում: «Աբ. Չիրիլո»-ն սովորաբար վաճառականներ էր տանում-բերում Հունաստանից Վենետիկ և Վենետիկից Հունաստան, ովքեր ձեթի և աղի առևտրով էին զբաղվում:

Այս անգամ ուղևորները վաճառականներ չէին, այլ տասներկու հայ վանականներ:

...Վերջալույսի վերջին շողերը տարածվել էին Ադրիատիկի ջրերին, և մարմրող օրը թեթև մշուշե քող էր նետել խաղաղ հափրանքի զգայնությամբ լեցուն բնության վրա: Տասներկու սևասքեն վանականներ ծունկի իջած վենետիկյան ծովափին՝ երախտագիտության տաք հուզումով իրենց աղոթքն էին շշնջում՝ փառաբանելով Տիրոջը: Նրանք կարողացել էին խուսափել թուրք ջարդարարներից և հասնել երազային այս ափը՝ ճիշտ է, դատարկածեղն, ճիշտ է, ամեն բան կորցրած, սակայն անհուն հավատով և երախտագիտությամբ լեցուն Տիրոջ հանդեպ, որ ապրեցրեց իրենց հանուն այն մեծ առաքելության, որ որդեգրել էին նրանք:



Վենետիկի ծերակույտը **Մխիթար Աբբահորը** առաջարկեց քաղաքից դուրս ընտրել մի տարածք, որտեղ կարող էր հաստատել իր միաբանությունը:

Քաղաքից ոչ շատ հեռու գտնվում էր **Աբ. Ղազար կղզին**, ընդամենը յոթ հազար քառակուսի մետր տարածքով: Աբ. Ղազարի դիմաց գտնվող երկարավուն **Լիդո կղզին** նրան պաշտպանում էր բաց ծովից փչող քամիներից:

Կղզին անմարդաբնակ էր, սակայն ուներ երկու սքանչելի ջրհոր: Կային նաև հին շինություններ, որոնք վաղուց ծածկվել էին վայրի թփերով:

Այդ շինություններին հասնելու համար հարկավոր էր մեծ ջանք գործադրել՝ հաղթահարելու համար չորացած փուշ ու տատասկի մացառները: Կիսաքանդ շինությունների պատերը պատված էին քարաքոսների խիտ ծածկույթով: Շինություններից մեկը 1100 թվականին կառուցված կիսաքանդ մի փոքրիկ եկեղեցի էր:

Սուրբ Ղազար կղզյակը 8-րդ դարում եղել էր Աբ. Հիլարիոն վանքի բենեդիկտյան նստավայր: 12-րդ դարում՝ բորոտների արգելոց: 16-րդ դարում՝ աղքատ հիվանդների ծերանոց: Հիմա՝ բացարձակ լքված ու ամայի, փուշ ու տատասկի, քարաքոսների բացարձակ թագավորություն:

Սակայն **Մխիթար Սեբաստացին** միայնության մեջ լքված անխնամ կղզում առաջին անգամ շրջելով՝ այն կարողացավ տեսնել իր և իր միաբանների աշխատանքով ծաղկուն ու բարեշնորհ փոքրիկ դրախտ դարձած:

Այնքան գեղեցիկ էին Սուրբ Ղազար կղզուց բացվող տեսարանները, ծովի արշալույսներն ու մայրամուտները, Վենետիկ քաղաքի ուրվագծերը՝ մերթ ողողված արևի պայծառությամբ, և մերթ մշուշե թեթև շղարշով ծածկված...

Այստեղ, այս կղզու վրա կարելի էր ստեղծագործել: Այստեղ կարելի էր կերտել իր վիրավոր **Հայրենիքի Ոգուն** արժանի մշակույթ...

...Վենետիկի ծերակույտը լքված կղզին ընդմիշտ շնորհեց **Մխիթարյան Միաբանությանը**:

Ալեամո Չերմետ և Պաոլո Կոնի Ռատտի դի Դեզիո հեղինակների միասնաբար գրված «Հայերի Վենետիկը» գրքում կարդում ենք.

«Մխիթարը և իր վարդապետները պաշտոնապես համարվեցին Սուրբ Ղազար կղզու տերերը: Մինչ չոր թփերը, փուշ ու տատասկը հավաքելը՝ փոքրիկ կիսաքանդ եկեղեցում շնորհակալական պատարագ մատուցեցին, բնականաբար, հայկական ծիսակատարությամբ, քանի որ Միաբանությունը իր պարտավորությունների մեջ ներառում էր մշտապես կենդանի պահել ազգային արևելյան բնույթը: Իրոք, Մխիթարյանների կողմից մատուցված ծիսակատարությունները եղել են և միշտ կլինեն ազգային: Պատարագին հաջորդեց բորոտների խցերը մաքրելը, որոնք երկու դար շարունակ քամիներից և աղից արդեն լավ հականեխված էին: Ծտապ վերանորոգված 14 խցերը ծառայեցին որպես բնակարաններ:

... Մխիթարը գիտակցում էր, որ Միաբանության առաքելությունը երկարատև պետք է լինի: Ուրեմն անհրաժեշտ էր, որ մենատունը իրենից հետո գոյատևեր: Եվ վերանորոգման, և՛ նոր շինությունների կառուցման ներդաշնակ ծրագիրը գործի է դրվում ջերմեռանդ աշխատասիրությամբ: Միաբանության քսանամյա զոհաբերությունների և զրկանքների շնորհիվ վերջապես վեր է խոյանում կարմրագույն, սքանչելի մենաստանը»:



Հիմնելով իր միաբանությունը՝ Մխիթար Սեբաստացին ուզում էր վերականգնել իր ժողովրդի Արժանապատվությունը, մտքի փլատակների տակ թաղված նրա Մշակույթը, այսինքն, նրա Լեզուն, Պատմությունը, Դավանանքը իր Ծեսով, Գիրը և Գրականությունը:

Մխիթար վարդապետը իր հոգեկան կերտվածքով, իր բարոյական ուժով, իմացական արտակարգ ծիրքերով, գերբնական հավատքով, անգիջելի կամքով բացառիկ երևույթ էր իր ժամանակի մութուլուսի մեջ: Նրա հոգին մշտապես հմայված էր աստվածային լուսից և այդ լուսից բխող ճշմարտությունից: Սակայն նա իր աշխարհայացքով միանգամայն իրապաշտ էր և մարդկային հոգեբանության ամենատարողունակ շերտերից կարող էր ներս թափանցել և մարդասիրաբար քննել:

Նա կարողացավ ստեղծագործել և ստեղծագործել տալ՝ խոր նիրհի մեջ տարուբերվող Հայոց մտքի դիմաց զարթոնքի փող հնչեցնելով:

Նա գիտեր իր ազգի հոգեբանությունն ամբողջապես, նրա ամենապայծառ և նաև անընդունելի, մերժելի գծերը: Նա գիտեր. Հայոց նոր Լուսավորությունը, Վերանորոգումի կարևոր իմաստը պիտի ուրից իր բուն արժեքին բերի:

Նպատակն արժեր տառապանքին:

Երբ թափառում էր Հայաստան Աշխարհով մեկ, շատ հաճախ միայնակ, քաղցի և տենդի ճիրաններում չարչարվելով, երբ գնում էր էջմիածին ու ետ դառնում, երբ հասնում էր Հալեպ ու ետ դառնում, երբ ափ էր ելնում Կիպրոսում ու ետ դառնում, երբ գնում էր Կոստանդնուպոլիս ու ետ դառնում՝ ի՞նչ էր փնտրում: Ինքն իրեն տառապանքի դատապարտած մարդը միտքը, հոգին տանջահարող դեռ որոշակի իմաստ չստացած գաղափարից ուզում էր դուրս կորզել իր ծնունդի գաղտնիքը, որովհետև նա վստահաբար գիտեր. ինքը հենց այնպես չի ծնվել, ինչ-որ կարևոր առաքելության դրոշմը կար իր հոգու վրա, զգում էր իր էության մեջ տաքուկ մի խլիրտ, որը դեռ անորոշ էր ու անկերպարանք, որը, սակայն, թե՛ ծնվեր՝ պիտի ուժ տար այն մեծ Ծրագրին, որը կիրագործեր Նպատակը:



Մխիթարյան Միաբանություն

Հիմա նա իր միաբանների հետ այստեղ էր, Սբ. Ղազար կղզում: Հիմա կարող ենք վստահաբար ասել, թե նրա Ծրագիրը երեք հարյուր տարվա քննություն է բռնել: Այն շարունակում է գործել՝ չունենալով երբեք չնչին խաթարումը իր իմաստից, որևէ շեղում տիտանական աշխատանքից:

Մխիթար Սեբաստացին սերունդ կրթելու բնածին ծարավ ուներ: Նա չի սահմանափակվել միայն կրոնական խնդիրներով, այլ ծավալել է նախադեպը չունեցող գործունեություն, որի արդյունքում կրոնական միաբանությունը

դեպը չունեցող գործունեություն, որի արդյունքում կրոնական միաբանությունը



վերածվել է նաև գիտամշակութային հաստատության: Սուրբ Ղազարուն նա ոչ միայն եկեղեցի կառուցեց, այլ նաև բացեց այնպիսի մի դպրոց, որը **Համալսարան** կոչվելու իրավունք ուներ: Եվ, թեև ուսումնական ծրագրի հիմքում դրվել է աստվածաբանությունը, սակայն աշակերտներին տրվել է գիտության ժամանակների պարտադրած բազմակողմանի կրթություն: Մերժել է օտարազգի աշակերտների մուտքն իր դպրոց, որպեսզի Միաբանությունը մնա զուտ **Հայկական**: Հայ աշակերտները սովորելով այստեղ՝ պիտի փոխարինեին միաբաններին և, երբ գար ժամանակը և լինեի սերնդափոխություն, պիտի վառ պահեին սերը հայ ազգի նկատմամբ և պիտի պատրաստ լինեին հայ ժողովրդի լայն խավերի շրջանում լուսավորություն տարածող առաքյալներ դառնալու:

Սեբաստացին 1729 թվականին Ամստերդամից Վենետիկ է տեղափոխում հայ մեծանուն տպագրիչ **Ոսկան Երևանցու** տպարանը՝ դասագրքեր և այլ գրականություն տպելու համար:



Մխիթարյան Միաբանության տպարանը

Բայց առանց լեզվական վերանորոգության՝ գրական վերածնունդը բացառվում էր: Այս պատգամը որպես կտակ նա թողեց իր աշակերտներին, որոնք իրագործեցին նրա կարևոր **Ծրագիրը**. ինչ-որ տեղ խաթարված և վիրավոր մայրենի **լեզուն** նորից դարձնելով կատարյալ, համապատասխան դասական իր գեղեցիկ արժանիքներին: Եվ առաջինը հենց ինքն էր, որ հանձն առավ գրելու և հրատարակելու **«Քերականութիւն գրաբար լեզուի հայկազեան սեռին»** գիրքը, որպեսզի, ինչպես ինքն


է բացատրում **«...նորավարժից տկարութեան օգնէ և զարգացնէ զանոնք քերթողութեան ուսման եւ հայկաբանութեան հմտութեան մեջ»**: Լեզվական վերանորոգմանը անուրանալի ծառայություն մատուցեց նրա պատրաստած **«Հայկազյան բառարանը»**, որը պարունակում էր այդ ժամանակաշրջանի բոլոր ձեռագրերի բառերը՝ վկայություններով ու օրինակներով հանդերձ.

«Եթէ Սէրը մեզի չՆորոհէր այս բառագիրքը, քիչ ատենէն մեր լեզուն խրթին եւ անվայելուչ դարձած՝ պիտի կործանէր»,— առաջաբանում գրում է հեղինակը:

Մխիթար Սեբաստացի վարդապետի մեծագույն մտահոգությունը նախ և առաջ Հայոց լեզվի քերականությունն էր, որը փայլուն կերպով կատարեց իր միաբանների հետ, որոնցից շատերը նրա աշակերտներն էին:

Մենք դեռ կհանդիպենք ու կպատմենք նրանց մասին: Բայց հիմա պետք է վերադառնանք **Մխիթար Սեբաստացու** անավարտ մնացած պատմությանը:

Մխիթար Սեբաստացի գերագույն մտավորականը իր ժողովրդի արժանիքների հանդեպ մշտապես խանդավառ հոգի էր: Նա ներքին զուսպ հպարտու-



թյամբ Սբ. Ղազարի մենաստանում սկիզբ դրեց միաբանության, այսօր արդեն աշխարհին ամենահայտնի հավաքածուներից մեկին, որտեղ ամփոփված են սքանչելի մանրանկարներով զարդարուն ձեռագրեր, որոնցից յուրաքանչյուրում Հայաստանի ոգեղեն պատմության վկայությունն ու հուշագրությունն է:

Սա հին ձեռագրերի **Մատենադարանն** է:

Բայց **Մխիթար Սեբաստացին** ստեղծեց նաև **Գրադարանը**, որն այսօր արդեն ունի հայերեն, արևմտյան և արևելյան զանազան լեզուներով հրատարակված հարյուր հիսուն հազար ամուն գիրք:

Գիտենք. **Մխիթար Սեբաստացին** կաթոլիկ էր և այդ տեսանկյունից էր աստվածաբանական հարցերը վերլուծում: Սակայն այս փաստը չի կրել որևէ «քաղաքագիտական հանգամանք», ինչպես նրա կաթոլիկությունը մեկնաբանել է **Հրաչյա Աճառյանը**, կամ չի ծառայել իբրև «ղիվանագիտական միջոց» ինչպես հավատացած էր **Արշակ Զոպանյանը**:

Նա մշտապես եղել է և՛ առաքելական, և՛ կաթոլիկ հայրերի քննադատության տակ: Առաջինները նրան մեղադրել են Հռոմի եկեղեցու գիրկն ընկնելու և նրա գերակայությունն ընդունելու մեջ, երկրորդները նրան ներկայացրել են իբրև ըմբոստ ու ինքնիշխան Հռոմի եկեղեցուց ու նրա իշխանությունից անկախ: Նման ամբաստանության պատճառը պարզ էր. նա ընդունել էր կաթոլիկ դավանանք, ուրեմն նաև Հռոմի աթոռի գերակայությունը, բայց մնացել էր ճշմարիտ **հայրենասեր ու հայասեր**, և անվերապահորեն հավատարիմ ազգային ավանդույթներին, ծեսերին ու արարողակարգին, իր հիմնադրած Միաբանությունը խորագույն հայեցի պահելու խնդրին: Նա հավատացած էր, և այդ մասին ամեն առիթով ասում էր, որ ազգը և կրոնը տարբեր հասկացություններ են, ուստի և հարկ չկա մեկի համար մյուսին զոհել:

Նա իր քարոզներում շարունակ եղբայրության ու խաղաղության կոչ է արել, մերժել կրոնական երկպառակությունը Հայոց մեջ, իր հրատարակած գրքերի տիտղոսաթերթերի վրա, ինչպես **խաչատուր երզրունցին**, միշտ նշել է տվյալ ժամանակի Ամենայն Հայոց կաթողիկոսի անունը, կտրականապես դեմ եղել կաթոլիկ հայերի առանձին կաթողիկոսություն ունենալուն:

«Բառագիրք Հայկազեան լեզուի» «Բան առ ընթերցողս» վերնագրով առաջաբանում գրել է.

«խոնարհամիտ սրտիւ ընծայեմ քեզ զպտուղ բազմամեաց աշխատութեանս՝ նուէր սիրոյ, զի ցանկալի է ինձ յինէն առնուլ և քեզ տալ»:

Ավելի բացատրելի ասել, թերևս հնարավոր չէ: Նույնը նաև իր հիմնադրած Միաբանության մասին խոսքը.

«Սկիզբէն ի վեր, ինչպէս ես, այս Միաբանութիւնն ալ սահմանուած է Հայ ժողովրդի մշակութային ծառայութեան եւ Աստծոյ Փառքին»:

Այսինքն. **«Աստծոյ փառքը՝ Հայ մշակույթի ծամրով»:**

Այսինքն. ժողովուրդ, որն ունի գրական, գեղարվեստական, երաժշտական, ճարտարապետական, փիլիսոփայական, պատմական երկերի, քերթողական արվեստի հավատամք՝ չի կարող ունենալ այլ խնդիր, քան ծառայել իր **Մշակութին** և իր լուսավոր **Դավանանքին**:

Դժվա՞ր է հասկանալ այս պարզ ճշմարտությունը, որի պատճառով հալածանքի է ենթարկվել այս զարմանալի մարդը քրիստոնյա հավատի երկու թևերի կողմից էլ:

Մխիթար Սեբաստացի ուսուցչի համար դաստիարակության կարևոր պայմաններից մեկը թատրոնն էր... 1730 թվականից սկսած **Մխիթարյանները** սկսում են բեմադրել այնպիսի ներկայացումներ, որոնք ցուցադրվում էին վենետիկյան երկարատև Բարեկենդանի օրերին: Նյութը երբեմն կրոնական էր, երբեմն պատմահայրենասիրական, կամ երգիծական: Թատերգությունները գրում էին վարդապետները, խաղում էին աշակերտները:

Բեմադրվում են **«Երվանդ և Արտաշես»**, **«Հայկ Դյուցազուն»** թատերգությունները, որոնք հայրենասիրական լինելով իրենց բովանդակությամբ՝ նաև բազմաբովանդակ հայերեն լեզվի հարուստ գանձարաններ էին:

Մխիթար Սեբաստացին Սուրբ Ղազարում բացահայտեց թատրոնի կարևորությունը, որն իր շարունակությունը գտավ Կոստանդնուպոլսի, Յնդկաստանի, Դրիմի ուսանողության շրջանակներում՝ որպես կարևոր մի առաքելություն:

Հայր Հարություն Պզտիկյանը գրում է.

«Որքան ալ զարմանալի թվի և շատերու համար հակասական, Հայ թատրոնը որպես գրական սեռ՝ ծնունդն է նոր գրականության շրջանին, որպես ծննդավայր ունենալով Սր. Ղազար Մայրավանքը»:

Իսկ գրականագետ, բանաստեղծ, թարգմանիչ, բազմաթիվ գրքերի հեղինակ **Հայր Մեսրոպ Ճանաչյանը** իր **«Պատմություն արդի հայ գրականության»** աշխատության մեջ գրում է.

«Կրոնքի և ազգի երկու մեծ գաղափարներն ահա, որ ծնունդ կու տան Մխիթարյան թատրոնին, այդ վանականները որ կ'ապրեին հեռու կյանքեն, բայց կը զգային կյանքը և ունեին հայրենիքի մեծության տեսլականը, իրենց երազային ապրումները կը փոխանցեին թուղթի վրա և ամոնց ներկայացումով կը հրձվին հոգեպես»:


Շարունակում է **Հայր Պզտիկյանը**.

«Թատրոնը կը գործածվի որպես միջոց հայրենասիրություն արծարծելու, անյայտի պատմական փառահեղ էջերը և լուսապայծառ դեմքերը կենդանացնելով, կրոնքի և հայրենիքի հերոսներուն հարություն տալով, գաղափարական Հայաստանի մը տեսլականը արթնացնելով, դարու մը մեջ՝ ուր ամեն ազատության զգացում և տենչ անմարդկային ճնշումներու ենթարկված էր, հատկապես ներքին գավառներուն մեջ»:

Ներկայացումներն սկսվում էին պատմական ողբերգություններով և ավարտվում էին թեթև կատակերգությամբ:

Հայր Ճանաչյան.

«Այդ կատակերգություններն շատերը զուրկ չեն իսկապես երգիծական նուրբ շերտե և հոգեբանական անդրադարձումներ... Ծիծաղելի թերություններ կը հանվեն բեմի վրա ու Պարոնյանեն դար մը առաջ՝ մեծապատիվ մուրացկաններու, Պաղտասար Աղբարներու տիպարները կը ցուցադրվին երգիծաբանորեն սրամիտ ու զվարթ շեշտով մը»:



Այսպես **թատրոնը** մտնում էր **գարթոնքի** հոսանքի մեջ՝ դառնալով ընդարձակ ու համապարփակ իր ժողովրդայնությամբ:

...Հետո Մխիթարյան Միաբանության վարժարանների նախկին սաների նախաձեռնությամբ Կոստանդնուպոլսում գարգացավ իսկական **թատրոնը** բանաստեղծ և դրամատուրգ **Սկրտիչ Պեշկեթաշյանի** անմիջական նախաձեռնությամբ:

Մեկ անգամ ևս դպրոցի մասին, որպեսզի վերջին անգամ շեշտվի **Մխիթար վարդապետի** կարևորագույն խնդիրը, որին, ի վերջո, ծառայում էին մնացած բոլոր գաղափարները և գիտական ու մշակութային գործունեության բոլոր ասպարեզները:

Նախ. **Մխիթարյան Միաբանության** դպրոցները անպայմանորեն պետք է բացվեին միմիայն հայ երեխաների համար:

Այսպես, Սբ. Ղազար կղզում բացվեց **Ժառանգավորաց** դպրոց և վարժարան, որոնց դասավանդման ծրագրերը երաշխավորում էին փիլիսոփայության, աստվածաբանության, քերականական խոր գիտելիքներ: Դպրոցն ու վարժարանը պիտի պատրաստեին իսկական առաքյալների, որոնք պիտի կարողանային կրթել ժողովրդին: Որովհետև հայ ժողովուրդը, իր հետ կատարված բոլոր ողբերգություններից հետո, կարծես կանգնած էր մտավոր անկումի եզրին: Օտարների լծի տակ, հայրենիքում ապրող ժողովուրդը և օտար աշխարհներում ցրված գաղթական ժողովուրդը դանդաղորեն կորցնում էր լեզուն և ավանդույթները, որոնց տեղը գրավում էին այն ժողովուրդների բարբառներն ու սովորությունները, որոնց մեջ ապրում էին: Սա նվաստացած վիճակ էր, որից դուրս գալու համար անհրաժեշտ էր գորեղ կամք, խանդավառ հայրենասիրություն:

Ահա, այս **գործն** էր, որին իր ողջ կյանքով ծառայեց **Մխիթար Սեբաստացի** լուսավոր հայը, մեծ մտավորականը և խորապես հայրենասեր մարդը:

1740 թվականին ավարտվեցին Սուրբ Ղազար կղզում տարվող շինարարական աշխատանքները: Ոչ մի նմանություն բորոտների նախկին արգելավայրի և գեղեցկորեն կառուցված սքանչելի պարտեզներով շրջապատված **Մխիթարյան Միաբանների** կղզյակի միջև:

...Երկարատև, ծանր դեղնախտ հիվանդությունը 1748 թվականի մարտին ուժասպառ Ուսուցչին գամեց անկողնուն: Այս անգամ հիվանդությունը չենթարկվեց բուժման:

Մխիթար սրբակենցաղ մարդը հոգին ավանդեց նույն թվականի ապրիլի 27-ին: Միաբանության Տարեգրության էջերում կարդում ենք.

«Տխուր ամբոխը, հարյուրավոր մոմերի լույսերով, խնկի հոտով Տիրոջը և ամենասուրբ Կոյսին նվիրված շարականներով, լուռ լացով և զուսպ հեկեկոցների ուղեկցությամբ ձեռքի վրա տեղափոխեց սուրբ մարմինը և դրեց եկեղեցում, այն ժամանակվա սովորույթի համաձայն, իր կողմից պատրաստված պարզ և մերկ մարմարապատ փոսը, և անուշ կերպարանքն անհետացավ քարե ծածկի տակ»:



Մահվանից հետո աշակերտները Միաբանությունը կոչեցին նրա անունով.
Մխիթարյան:

Հայ մտավորականների մի քանի կարծիքներ մեծ Մխիթար Սեբաստացու մասին...

«Իր ժամանակին մեջ, իր ժամանակեն ալ դուրս այս հզոր միտքը, որ Մխիթար կը կոչվի՝ զիս կը շփոթեցնե իր գործին ահագնությամբ... Ի՛նչ միտք է այս, Աստված իմ, մտքի ի՛նչ խորություն Սեբաստիայի այս հայուն մեջ... երկրե երկիր հալածական, խավարի մեջ թափառական՝ մեծերուն մեջ Մեծ այս տաղանդավոր հայր...»:

«Մխիթար ծնավ հայ, ապրեցավ որպես հայ, պայքարեցավ ու գործեց հայության համար: Անիկա աշխատեցավ, որ հայուն բոլոր առաքինություններն ու հարստությունները, հայրենիքի սերը, սերը իր ժողովրդին ծառայելու, զորանան, զարգանան ու մնան անաղարտ... Եվ Մխիթար մեծ էր նաև անով՝ որ իր ամբողջ հանձարը ի սպաս դրավ իր ցեղի վերածնունդին, իր ցեղին հավիտենականության, և հասնելու համար իր նպատակին՝ գեղեցիկին, ազնիվին, լուսին, հայրենասիրական շենքին, անիկա տարավ անընդհատ և հսկայական պայքար՝ արգելքներու և նախանձի դեմ, ներքին և արտաքին հուժկու թշնամիներու դեմ, առանց նյութական միջոցներու, առանց հավաքական աջակցության, միմիայն բարոյական հմայքով:


Ոչ ոք կրնա հաստատել, թե առանց Մխիթարի, այսօր ինչ վիժակ պիտի ունենար մեր լեզուն, ինչ աստիճան պիտի ներկայացներ մանավանդ Սփյուռքի հայրենասիրությունը»:

«Մխիթար վարդապետը մեր ամենամեծ, ամենեն փառավոր դեմքերեն մին է: Առանց իր շունչին, պիտի չունենայինք վստահաբար այս մեծ հայերը՝ Չամչյան, Բագրատունի, Ալիշան, Գաթրճյան, Այտնյան, Ինժիճյան, Գարագաշյան, Պեշիկթաշյան և այլն... Անիկա եղավ վավերական հայ խոշոր հանձար մը. ասիկա կը ցոլա ամբողջությամբ իր գործին մեջ, իր շրջանին, իրմե հետո ալ...»:

Իսկապես նրանք շատ էին. նրա հետ միաժամանակ աշխատած և ապա նրանից հետո եկած երախտավորները... Նրանց անունների պարզ թվարկումն արդեն բազմաթիվ էջեր կարող են լրացնել: Բոլորի մասին անկարող ենք պատմել, սակայն մի քանիսին պարտավոր ենք ներկայացնել:

Մխիթարյան Միաբանության հիմնադիր **Մխիթար Սեբաստացու** մահից հետո Աբբահայր ընտրվեց **Հայր Ստեփանոս Մելքոնյանը**: Նա գիտական և կրոնական գործերի հրատարակմանը վերաբերում էր նույն կերպ, ինչ իր նախորդը:

Այդ ժամանակ էր, որ միաբանների մի խումբ, ինչ-ինչ պատճառով չընդունելով նոր Աբբահոր հեղինակությունը, հեռանում է Սբ. Ղազարից, տեղափոխվում Տրիեստ, ուր **Մարիա-Թերեզա կայսրուհու** օգնությամբ **Սբ. Մարտիրոսաց եկեղեցում** հիմնադրում է իր վանատունը և տպարանը: Դեռ կպատմենք այս միաբանության և նրա արժանի գործերի մասին: Շարունակենք Սբ. Ղազարի միաբանների պատմությունը:



Միքայել Չամչյան

Հայր Միքայել Չամչյանը որպես քերականության հեղինակ՝ երկրորդն էր:

Հավակնություն չունենք գրելու այս սուրբ հայրերի մասին այնպիսի խոսք, որ արժանի լինի նրանց կատարած Գործի մի պայծառ հատիկին անգամ: Բազմաթիվ հատորներ են հարկավոր վերլուծելու, մատուցելու և գնահատելու համար նրանց «վայելուչ, ընտիր, վճիտ» գիտական ու գրական ստեղծագործությունների «գեղեցկագիտական ճաշակը»: Ուրեմն, այստեղ մի քանի հանրագիտարանային տեղեկություններ միայն:

Հայր Միքայել Չամչյանը նոր ժամանակների պատմահայրն է, որն իր «Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի միջև ցամ տեառն 1784» եռահատոր

սքանչելի աշխատության մեջ ամփոփեց իր ժողովրդի ապրած, խիզախումներով, հաղթանակներով, անկումներով ու վերելքներով լեցուն կյանքը: Նկարագրեց նրա անասելի տառապանքները և այդ տառապանքներին դիմագրավելու աստվածատուր կորովը: Նա սրտի ցավով «Ժամանակ Անիշխանության» կոչեց Հայոց կյանքի այն հատվածը, որն սկսվել էր Կիլիկիոյ Հայոց թագավորության անկումից հետո՝ 1375 թվականին:



Չամչյանի եռահատոր աշխատությունը

Միքայել Չամչյան ճշգրիտ ու սպառնիչ պատմողը եղավ իր ժողովրդի հազարամյակներ երկարող կյանքի ու մանրամասների՝ պրպտելով ու օգտագործելով հայ և օտար բոլոր աղբյուրները, ձեռագրերը, մինչ այդ անհայտ բազմաթիվ վկայություններ լույս աշխարհ հանողը:

Պատմությունը նրա համար գործնական նշանակություն ուներ, այն պետք է՝ հասարակությանն օգներ դժվարին պահերին ճիշտ կողմնորոշվելու:

...Նա ծնվել է 1738 թվականին և 24 տարեկանում դարձել Մխիթարյան Միաբանության անդամ: Ապրել է 85 տարի և դարձել պատմաբան, քերական, լեզվաբան, աստվածաբան, մանկավարժ՝ տիրապետելով բազմաթիվ հին ու նոր լեզուների՝ հունարեն, լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն, գերմաներեն, եբրայերեն, սանսկրիտերեն, ասորերեն, պարսկերեն, թուրքերեն: Այլևայլ պաշտոններ է վարել Սբ. Ղազարից դուրս՝ լինելով սակայն Մխիթարյան Միաբանության ներկայացուցիչը: Երբ նա գրեց իր «Քերականութիւն Հայկազեան լեզուի» աշխատությունը, այն դարձավ Հայոց լեզվի ուսուցման գործում կարևոր ձեռնարկներից մեկը՝ գրեթե մեկ դար օգտագործվելով որպես գրաբարի քերականության լավագույն դասագիրք: Մեզ համար քերականության այս գիրքը գնահատելի է նաև, որովհետև նա մերժել է



լատինաբան հեղինակների նորամուծությունները, ովքեր մտածում էին լատինական կաղապարներով և աղավաղում գրաբարի իրական նկարագիրը:

Նա, փաստորեն, աղճատված հայերենի քերականությունը բերեց իր նախնական հարազատ ակունքներին՝ մաքրելով այն օտար տարրերից:

Հայ մեկնողական գրականության գլուխգործոց է **Զամչյանի «Մեկնութիւն սաղմոսաց»** տասը հատորանոց երկասիրությունը:

Սբ. Ղազարի մատենադարանում պահվում են վաստակաշատ այս մտավորականի **«Մեկնութիւն Ավետարանի Յովաննու», «Լատիներեն-Հայերեն»** բառարանը, **«Ողբերգութիւններ»** գործերը:

Հետաքրքիր է նրա կենսագրության այս դրվագը: Կոստանդնուպոլսի լուսավորչական և կաթոլիկական համայնքների միջև ընթացող սուր պայքարը հարթելու նպատակով գրում է **«Վահան հաւատոյ, հաստատի ուղղափառութիւն Հայաստանեայց Լուսավորչէ մինչև ցայսօր»** 1000 էջանոց դավանաբանական երկը, որը Հռոմի հավատաքննության գերագույն ատյանի որոշմամբ ճանաչվեց հերետիկոսական և ոչնչացվեց: Սակայն նրա համառոտ տարբերակը հնարավոր եղավ հրատարակել Կալկաթայում:

Հայր **Զամչյանն** է մշակել հայկական դպրոցների ուսումնական և բարոյակրթական կանոններն ու ծրագրերը: Դասավանդվող առարկաներից գերակշռությունը տվել է հայագիտությանը:

Իսկ դպրոցը՝

«...պարտի լինել քաւական տեղի անդորր ի բնակութիւն մանկանց եւ ուսուցչաց. Պարտի լինել ի դպրատան եւ որոշյալ տեղի վասն հիւանդաց... պարտի լինել ի դպրատան երկու կամ երեք վարդապետք, մին իբր մեծատր եւ այլքն իբր կառավար եւ ուսուցիչ եւ հոգետր դաստիարակ...»:

Հիշենք. Միքայել Զամչյանը Մխիթար Սեբաստացուց հետո երկրորդ քերականն էր:

ԳԱՔՐԻԵԼ ԱՎԵՏԻՔՅԱՆ




Գաբրիել Ավետիքյան

Գաբրիել Ավետիքյանը քերականության երրորդ հեղինակն էր: Հայր Ավետիքյանը տալով գրաբարի ճշգրտությունը, առաջին անգամ, նորավարժարանին օգնելու համար, բացատրություն է տալիս աշխարհաբարով:

Իսկ լեզվական վերանորոգումի մեծագույն կոթողը **«Նոր Հայկազյան բառարան»**–ն է, գործը հայրեր Գաբրիել Ավետիքյանի, Խաչատուր Սուրմեյանի, Մկրտիչ Ավգերյանի:

Հրաջա Աճառյանը այս բառարանը որակել է որպես **«Հայ լեզվի ամենեն կատարյալ բառարանը»:** Եվ այն մինչև այժմ հայ մտավորականության ուղեցույց օգնականն է:



Հիմա պիտի նորից հիշենք, թե ինչ վտանգ էր կախվել **Աբ. Ղազարի** գլխին, երբ եվրոպայով սլանում էին **Նապոլեոն Բոնապարտի** դեռ անհաղթ բանակները: Նապոլեոնը գրավել էր Վենետիկը և 1805 թվականին հրապարակած նրա մի օրենքի համաձայն մի շարք կրոնական միաբանություններ պետք է փակվեին: Այդ օրենքը վերաբերում էր նաև Իտալիայի միաբանություններին, ուրեմն նաև՝ **Մխիթարյան Միաբանությանը**: Միաբանությունների կալվածքները և հարստությունը բռնագրավում էր պետությունը:

ԱՊՈՆՑ ԳՅՈՒՎԵՐ

Մխիթարյան Միաբանության Աբբահայրը **Ստեփանոս Ազոնց Գյուվերն** էր, որը բացառիկ աստվածաբան լինելով և կրոնա-բարոյախոսական երկեր գրելով հանդերձ՝ աշխարհագրագետ էր նաև, այդ բառի գիտական իմաստով, և այդ խնդրին վերաբերող մեկնաբանություններում ելնում էր Կոպեռնիկոսի արևակենտրոն ուսմունքից, որն այդ ժամանակ դեռ չէր ընդունվում կղերականության կողմից: Լուսավոր մի մարդ, որ իր գործունեությամբ հայ մտքի իմացությանը նվիրաբերեց իր ողջ կյանքը՝ իր կարևոր ու անուրանալի նպաստը բերելով իր հայրենի մշակույթի առաջընթացին:

Ահա. **Աբբահայր Ազոնցը** և միաբանները, լսելով հոգևոր միաբանությունները փակելու **Նապոլեոն Բոնապարտի** օրենքի մասին, ապրում են հուսահատության ծանր պահեր:

Բայց գիտենք արդեն, թե ինչպես ավարտվեց այս պատմությունը: Հիշո՞ւմ եք. միջամտեցին Նապոլեոնին ծառայող և նրա համակրանքը վայելող հայերը:

1807 թվականի նոյեմբերին Նապոլեոնը մտավ Վենետիկ, իսկ դեկտեմբերին հայ մամուլը **Ռուստամը**, պճնված գույնզգույն մամուլյան հազուստներով, ափ իջավ **Սուրբ Ղազարում** և **Ստեփանոս Ազոնց Աբբահորը** հանձնեց Նապոլեոնի ունկնդրության հրավերը հաջորդ օրվա համար, ճիշտ ժամը ութն անց երեսունին:

Ահա, թե ինչ է գրվել այդ հանդիպման մասին.

«Նապոլեոնը մտավ սրահ և մի քանի հարցով անմիջապես դիմեց Աբբահորը, վերջինիս անձնական գործունեության, Միաբանության կյանքի և ընդհանրապես Հայաստանի վերաբերյալ: Ապա անդրադառնալով Հ. Ավետիքյանին և լսելով, որ ծննդով Կոստանդնուպոլսից է՝ կայսրը ժպիտով բացականչեց՝ Մե՛ծն Կոստանդնուպոլիս:

Աբբահայրը հանձնեց նախօրոք պատրաստված խնդրագիրն արդեն իսկ հայտնի խնդիրների վերաբերյալ, սակայն կայսրը անպատասխան թողեց այդ»:

Անպատասխան թողեց, որովհետև խոսքով արդեն պատասխանել էր: Նապոլեոնը համակրանք ուներ հայերի նկատմամբ, և նրա այդ տրամադրվածությունն ամրապնդվեց **Աբ. Ղազարի Աբբահոր** և աթոռակալի հետ հանդիպումից հետո...

Երբ Նապոլեոնը արդեն հեռացել էր Վենետիկից, **Աբ. Ղազար** հասավ նրա մյուս հայ համհարզը՝ **Պետրոսը**, Նապոլեոնի հրամանագրով. *«Վենետիկի Աբ. Ղազար կղզու հայ վարդապետները պահպանում են իրենց ներկա կարգավիճակը»:*

Այս հայ վանականների և նրանց **Գործի** հանդեպ ունեցած համակրանքն էր, որ Նապոլեոնին մղեց Փարիզի Արևելյան լեզուների բարձրագույն դպրոցում **Հայագիտության** ամբիոն բացել:

...Երբ Վենետիկը վերադարձվեց Ավստրիային՝ նրա կայսր **Ֆրիդրիխը** նույնպես արցելեց Սբ. Ղազար, որի մասին շատ հետաքրքիր բաներ էր լսել: Բայց այն, ինչ տեսավ և լսեց տեղում՝ վեր էր իր բոլոր սպասելիքներից: Հիանալով սքանչելի ճարտարապետությամբ, միաժամանակ նկատեց, որ կղզին չափազանց փոքր է, և կարգադրեց Միաբանությանը նվիրել ափամերձ ծովի մի հարմար կտոր... Կղզու վանականներն իրենց միջոցներով այս ու այն կողմից հող տեղափոխելով, ծովի այդ մասը ցամաքեցնելով՝ կարողացան կրկնապատկել կղզու մակերեսը:

Այս ժամանակ էր, որ կրկնակի մեծացած Սբ. Ղազար այցելեց **Ջորջ Գորդոն Բայրոնը**, Անգլիայի, բայց նաև քաղաքակիրթ ողջ աշխարհի բանաստեղծը:

Սակայն նախքան բանաստեղծի այցելության մասին պատմելը՝ խոսենք **Սկրտիչ և Հարություն Ավգերյան** եղբայրների մասին, ովքեր, ի դեպ, աշակերտել էին **Հայր Միքայել Չամչյան** բազմավաստակ գիտնականին:

ՄԿՐՏԻՉ ԱՎԳԵՐՅԱՆ



Մկրտիչ Ավգերյան

Սկրտիչ Վարդապետ Ավգերյանը լեզվաբան, բառաբանագետ, աստվածաբան, թարգմանիչ, **Մխիթարյան Միաբանության** սյուներից մեկն էր, նրա սքանչելի ուսուցիչներից մեկը: Նա բացի իր գիտական և մանկավարժական գործունեությունից, Սբ. Ղազարում եղել է Միաբանության խորհրդականը, 20 տարի շարունակ ընդհանուր աթոռակալը:

Այլևայլ աշխատությունների կողքին նա իր կարևոր մասնակցությունն է բերել **«Նոր բառագիրք Հայկազեան լեզուի»** կամ, ինչպես ընդունված է ասել, **«Նոր Հայկազյան բառարանը»** կազմելիս: Հայր Սկրտիչ Ավգերյանը կազմել և խմբագրել է է-Ֆ տառերի բառացանկը և բառահոդվածները, գրել է **«Նախադրումը»**

առաջաբանը և **«Հավելվածը»**:

Հայր Սկրտիչ Ավգերյանը զգալով ավելի գործնական բառարանի անհրաժեշտությունը՝ համառոտել է **«Նոր Հայկազյան բառարանը»**, կազմել **«Առձեռն բառարան Հայկազեան լեզուի»**, ուր բառերը ներկայացված են իրենց իմաստային նշանակություններով, քերականական բացատրություններով:

Հայր Սկրտիչ Ավգերյանը հսկայական աշխատանք է կատարել թարգմանության ասպարեզում: Բազմաթիվ են լատիներենից գրաբար և հայերենից լատիներեն գործերի թարգմանությունները: Նախ՝ **Հեթում Պատմիչի «Պատմութիւն թաթարաց»**, Սենեկայի **«Ծառք իմաստասիրականք»** գործերը: Ապա

գրաբարից լատիներեն է թարգմանել Փիլոն Եբրայեցու «ճառերը», Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը», որոնց հունարեն բնագրերը կորած էին, և որոնք նա թարգմանել է հայերեն հին թարգմանությունների բնագրերից:

Հայր Մկրտիչ Ավգերյանը գրել է կրոնա-բարոյախոսական չափածո և արծակ երկեր. «Բարի խորհուրդներ», «Դեղ կենաց, որ է հոգևոր բժշկարան»՝ գրված արևմտահայերենով:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԳԵՐՅԱՆ



Հարություն Ավգերյան

Հարություն Վարդապետ Ավգերյանը Մկրտիչ Ավգերյանի եղբայրն էր: Նա մույնպես լեզվաբան էր, բառարանագետ, թարգմանիչ, ուսուցիչ:

Հայր Հարություն Ավգերյանը 1786 թվականից, 12 տարեկանից, ապրել է Սբ. Ղազարում և տիրապետում էր հունարեն, լատիներեն, եբրայերեն, իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն, հունգարերեն, գերմաներեն, թուրքերեն լեզուներին:

Անհնար է գերազնահատել Հայր Հարություն Ավգերյանի լեզվագիտական կարողությունները, որոնք լիարժեքորեն դրսևորվեցին բառարանագիտության բնագավառում: Նա կազմել է «Ֆրանսերեն-հայերեն», «Հայերեն-ֆրանսերեն-թուրքերեն», «Անգլերեն-հայե-

րեն», «Հայերեն-անգլերեն» բառարանները, որոնցով ցանկացել է օտարներին սովորեցնել հայերեն, իսկ հայերին հաղորդակից դարձնել Եվրոպայի գիտության նվաճումներին:

Բացի բառարաններից՝ նրա չափազանց կարևոր աշխատություններից է. «Բացատրութիւն չափուց և կշռոց նախնեաց, առաջնորդությամբ Եփիփիանու, Խորենացոյ և Շիրակացոյ»:

Կատարել է Ներսես Լամբրոնացու, Ներսես Շնորհալու հայերենից իտալերեն թարգմանությունները, ինչպես նաև Միլտոնի «Դրախտ կորուսյալ» գործը իտալերենից հայերեն:

Զմոռանալով կազմել է նաև «Գերմաներեն-հայերեն» և «Հունարեն-հայերեն» բառարանները:

Ահա այս սքանչելի վարդապատն էր լորդ Բայրոնի հայերենի ուսուցիչը: Ասացինք, չէ՞, որ բանաստեղծը այցելել է Սբ. Ղազարի միաբաններին:

ԲԱՅՐՈՆԸ ԵՎ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐԻ ՄԻԱԲԱՆՆԵՐԸ

Նա 28 տարեկան էր և հռչակավոր արդեն... Գայթակղություններից հիասթափված, իր հայրենիքում անցանկալի դարձած և այդ պատճառով կամավոր տարագրության ճանապարհը բռնած՝ Բելգիայում, Շվեյցարիայում, Միլանում երկար թափառելուց հետո 1816 թվականին ժամանեց Վենետիկ:



Հայտնի է, թե ինչը հրապուրեց հախուռն բնավորության տեր, ամեն տեղ արկածներ որոնող բանաստեղծին, որ այցելի Սբ. Ղազարի վանականներին: Բայց փաստ է, որ մեկ անգամ այցելելուց հետո՝ նա այլևս չկարողացավ դիմադրել գայթակությանը, որպեսզի ամեն առավոտ լողալով կամ գոնդոլով չհասնի Սբ. Ղազար:



Բայրոն

«Անդունդից վեր բարձրանալու նպատակով ինձ տրամադրեցի ամեն օր Հայոց լեզվի ուսումնասիրությանը: Հգում էի, որ հոգիս կարիք ուներ կապվելու մի շատ լուրջ և փութաջան աշխատանքի: Ահա, թե ինչու ընտրեցի հայերենը, որն աշխարհի ամենաբարդ լեզուն է, որը և գերազանց միջոց է կամքս կոփելու»:

Նրա փոթորկող ոգին խաղաղության կարիք ուներ: Իմաստուն խաղաղության: Պատերազմների ու հեղափոխությունների, կայսերական ժառանգական իրավունքների վեճերի, մտավորականության ամենատարբեր գաղափարների, պերճության ու աղքատության, կրքոտ ու քմահաճ անհատականությունների, կրոնական բանադրանքների, տաղանդների անօրինական փայլատակումների խառնարանում, բնավորության ու համձարի անհաշտության ու երբեմն խելագարության հասցնող կործանարար ճգնաժամերը բանաստեղծին տանում, հասցնում էին խաղաղ այն անկյունը, որտեղ մի խումբ վանականներ խոկունի երազային պահերի մեջ քննում էին Աստծո և իրենց տառապյալ ժողովրդի ճշմարտությունը՝ փաստելու համար մեկ այլ **Գոյության** իրական լինելը:

«Կարգուկանոնը, մաքրությունը, անուշությունը և իրական բարեպաշտությունը, տաղանդն ու ժշմարտությունը բնորոշ են հայկական կղզու վարդապետներին, միանգամայն ի վիճակի են աշխարհիկ մարդուն ապացուցելու, որ գոյություն ունի մեկ այլ աշխարհ, որը շատ ավելի լավն է, քան մերը...»:

Սրանք բանաստեղծի խոսքերն են: Նա իր մտորումների ու օրինազանցությունների խառնարանից կարողացել է ըմբռնել Սբ. Ղազար կղզու Մխիթարյան Միաբանության առաքելության խորին իմաստը:

«Այստեղ շրջում են ինձսուն վարդապետներ, որոնք խոսում են միայն ամենաանհրաժեշտը»:

Նրա խանդավառությունը Սբ. Ղազարի վարդապետների հանդեպ անսահման էր: Նա հայերեն էր սովորում, և նրա ուսուցիչը Հայր Հարություն Ավգերյանն էր, որն, ասում են, շատ լավ հասկանում էր բանաստեղծի փոթորկուն հոգին և ամեն կերպ աշխատում էր խաղաղեցնել նրան:

Բայրոնը շատ արագ տիրապետում է հայերեն լեզվին, այն աստիճան, որ անգլերեն է թարգմանում Մովսես Խորենացու «Պատմության» մի մասը, Ներսես Լամբրոնացու «Ճարտասանությունը» և Սբ. Պողոսի «Կորնթացիներին ուղղված նամակները»:



Բայրոնը Վենետիկում ապրեց երեք տարի: Նրա խանդավառությունը ժամանակի այս ընթացքում այնքան բուռն էր Սբ. Ղազարի վարդապետների հանդեպ, որ ավելի որոշակի է դարձնում իր գործուն օժանդակությունը՝ մասնակցելով **Հայր Հարություն Ավգերյանի «Հայերեն-անգլերեն»** և **«Անգլերեն-հայերեն»** բառարանների կազմմանը և հատկապես անգլիացիների համար պատրաստած **«Հայոց լեզվի քերականություն»** ձեռնարկի հրատարակմանը:

Այս գրքի նախաբանում **Բայրոնը** հիացնում և քննադատում էր միաբանությունը՝ միաժամանակ բարձրացնում է մահ հայ ժողովրդին թուրքական և պարսկական բռնակալություններից ազատագրելու խնդիրը: **Բայրոնը** ծանոթացել էր Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը և անգլերեն է թարգմանել այն մասերը, որոնք պակասել էին Աստվածաշնչի անգլերեն թարգմանությանը: Նրա հետաքրքրությունն այնքան մեծ է եղել այդ ուղղությամբ, որ ցանկացել է իր **«Կայեն»** պոեմի համար օգտագործել առասպելի հայկական տարբերակը: Նա, ի վերջո, իր հեղինակավոր ազդեցությամբ նպաստել է հայագիտության տարածմանն ու զարգացմանը Եվրոպայում:

...«Այստեղ շրջում են իննսուն վարդապետներ, որոնք խոսում են միայն ամենաանհրաժեշտը...»:



**Չայլդ Հարոլդի
ուխտագնացությունը**

Սբ. Ղազարում **Բայրոնն** իրեն զգում էր ինչպես հարազատ տանը: Կղզի նա հիմա շատ հաճախ հասնում էր լողալով՝ կարծես ուզում էր մաքրագործվել նախքան սրբազան այդ վայրը մտնելը: Մենաստանում ուներ մի փոքրիկ սենյակ, որը մինչև այսօր հայտնի է որպես **Լորդ Բայրոնի սենյակ**, ուր հավաքված են նրա բոլոր ստեղծագործությունները և մահ Մխիթարյան տապարանի կողմից հրատարակվածները: Այստեղ է գտնվում մահ **«Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը»** պոեմի չորրորդ երգը, որը **Հայր Ալիշանը** թարգմանեց դասական հայերենի, երբ 1860 թվականին գտնվում էր Անգլիայում: Այստեղ է մահ պոետի դիմանկարը՝ Սբ. Ղազարի ձիթենիների ստվերում միայնակ նստած: Նա սիրում էր առանձնանալ Ձիթենյաց բլրում, որտեղ և գրել է **«Չայլդ Հարոլդի»** չորրորդ երգը:

Ասում են, բնավորության ծայրաստիճան տատանումները բանաստեղծին շարունակաբար մղում

էին մեկ ստեղծագործական մեկուսացումների և մեկ էլ անվերջանալի ժամանցների: Մերթ Սբ. Ղազարում շնչող ողջ հոգեկանության և մերթ ամենասանձարձակ զվարճության: Նրան ընդունելով՝ վարդապետները հասկացել էին սա... և շարունակ աղոթում էին նրա համար:

1823 թվականին նա մեկնեց Յունաստան և մասնակցեց Թուրքիայի դեմ կազմակերպվող ապստամբությանը: 1824 թվականի ապրիլին հիվանդացավ տենդախտով և մահացավ: Նա ընդամենը 36 տարեկան էր:



Կարդանք մի փոքր հատված «Չայլդ Ֆարուլդի ուխտագնացությունը» պոեմի չորրորդ երգից, որը գրել է Սբ. Ղազարուն:

«Քո երանավետ ու կանաչ ափին՝
Բլրի գագաթին կա մի սուրբ տաճար, -
Անցյալից որպես հիշատակ մի հին,
Իսկ այնտեղ, ցածում՝ զառիթափն ի վար,
Ջրերիդ խորքում բյուրեղ ու պայծառ
Առկայծում են միշտ ձկնիկներ արծաթ,
Հանկարծ սահում է հարսնամատն անչար
Քո ընթացքն ի վար, ուր ջրերն ազատ
Պատմում են ոսկյա կարկաչուն հեքիաթ:

Անցո՛րդ, այս վայրի ոգուն դու օրհնիր,
Քանզի թե զեփյուռը հալվի ծակատիր, -
Գիտցիր՝ այդ նա է շնչում կենսալիր,
Ու թե անցնես դու այս կանաչախիտ
Չմրուխտ ափերով ու հազար ժպիտ
Բացվեն քո սրտում այս նոր պատկերի
Պայծառ զովությամբ ու դժվար կյանքիդ
Փռչին բնության կնունքն այս մաքրի, -
Օրհնի՛ր դու նրան, խոսք ասա բարի...»:



Բանաստեղծի անունը պարուրվեց առասպելով. Սբ. Ղազարի մենաստանի նախամուտքում գտնվող պարտեզում փակցված մարմարյա սալիկը կենդանի է պահում Բայրոնի՝ հայերի հանդեպ տածած սերը:

...Իսկ Ավգերյան երկու եղբայրները վախճանվել են նույն 1854 թվականին. Մկրտիչ Ավգերյանը 92 տարեկան էր, Հարություն Ավգերյանը՝ 80:

Ողորմի՛:

Ամեն օր բազմաթիվ այցելուներ են իջնում Սբ. Ղազարի ափ: Եվ խոստովանում են, որ հայ կրոնավորների այդ փոքրիկ կղզյակում դեռ ափ չելած՝ ապրում են ինչ-որ բարերար, խաղաղեցնող, խառնաշփոթ մտքերը կանոնավորող, աշխարհային բոլոր տիպի ապրումները թոթափելու զգացում, ներքին ազատության թելադրանք, հոգին կաշկանդող ստրկամիտ մտածումներից ձերբազատում, ամենուրեք փնտրված և ահա այստեղ գտնված մի տաք ուրախություն, հետզհետե ծավալվող ու էության մեջ խորացող բարեպաշտություն:



Եվ սա՝ մանավանդ երբ այցելուն դանդաղ թափառում է կղզու կանաչ տարածքով, որը գունազարդված է ամենաբազմազան ծաղիկներով, դափնե-վարդերի, բուրունմավետ նոճիների, մասրենիների առողջարար շնչով: Այցելու-ները չափազանց հուզվում են, երբ նրանց պատմում են, որ վարդապետները վաղ առավոտյան հավաքում են այս վարդերի դեռ ցողաթաթախ թերթիկները, պատրաստում քիմքը քաղցրացնող սքանչելի անուշ, որով հյուրասիրում են այցելուներին՝ իրենց իմաստուն գրույցների հետ:

Կարդանք «Հայերի Վեներտիկը» գրքից մի էջ.

«Սբ. Ղազարն իր կանչով դյուֆել է նաև մշակույթի և արվեստի համաշխարհային հեղինակությունների. Ալֆոնս դը Լամարտին, որի գոյութենական պրպտումները հասնում են Արևելյան հոգեսիրության, Գաետանո Դոնիցետտի, որի մեղեդին այս կղզու պես արտացոլում է առաքինություն և անբասիր պահվածք, Ադա Նեգրի, ում այցը Սբ. Ղազար առիթ հանդիսացավ ստեղծելու կյանքի քրիստոնեական ըմբռնում-ների համապատասխան քնարերգական գործեր, Ջուզեպպե Վերդի, որ այստեղ եկավ 1867 թվականին և նորից 1870 –ին, «Աիդան» հորինելուց առաջ՝ հոգին Արևելքի ամենաիրական երաժշտական ներդաշնակությամբ սնելու նպատակով, Իգոր Ստրավինսկի, վերազարթնելու երաժշտական մի նոր զգացողությամբ, որ նրան կառաջնորդի դեպի կաթոլիկ հավատ, Ջովաննի Պապինի, որ իր տիեզերասլաց խանդավառությամբ ցանկանում էր հագնել արևելյան մշակույթով և հասկանալ քրիստոնեության տիեզերական ըմբռնումը, Մարսել Պրուստ, որ մարդկանց ապականող ժամանակի ընթացքից տազնապած՝ առնչվելով հազարամյա ձեռագրերին, որոնց իրականությունն ապրում էր կղզում՝ հասկանում է, որ ժամանակն անջնջելի է, որ իրոք այն մնում է թաքնված մեր ենթագիտակցության խորքում՝ սնելով գաղտնաբար մեր ներկան, պատրաստ վերընծյուղվելու աննախատեսելի ու պատահական աննշան իր դրվագից: Ահավասիկ, հիշողության հաղթանակը ընդդեմ ժամանակի: Եվ կրթության ու ժողովրդի խորհրդանիշ Սբ. Ղազար կղզու անեղծ շունչը մեղմացրել է Պրուստի անձկությունը՝ հավատ ընծայելով նրան:

...Պաշտոնական այցելությամբ Սբ. Ղազար են եկել նաև ամենատարբեր գաղափարախոսությունների տեր մարդիկ:

...Նրանք բոլորը եկել են ըմբռնվելու Սբ. Ղազարի միաբաններից ճառագող լույսն ու խաղաղությունը, վայելելու կղզու սքանչելի բնությունն ու վանականների աշխատասեր ձեռքերով բարձրացված կղզու սքանչելի բնության գեղեցկությունը, քայլելու Թանգարանի սրահներով, որի հավաքածուները կարող են մրցել աշխարհի լավագույն թանգարանների հավաքածուների հետ: Այն իրոք, անչափ տպավորիչ է: Նույնքան հարուստ ու տպավորիչ է Գրադարանը...»:

Գիտենք. 1732 թվականին միաբանների՝ Սբ. Ղազարում հաստատվելուց անմիջապես հետո, այստեղ հիմնվեց փոխարինողներ, այսինքն՝ ուսուցիչներ պատրաստելու հրաշալի Ուսումնական կենտրոնը, որն իր մտավոր լույսն էր տարածում դեպի Աշխարհի չորս ծագերը:



Եվ ահա, այս սքանչելի Դպրոցի հիմնադրումից 100 տարի անց, երբ Միաբանության Աբբահայրն էր **Հայր Սուքիաս Սոմալյանը**, կրթական գործն ընդարձակելու համար հեռավոր **«խորհրդավոր»** Արևելքից հեքիաթային ժառանգություն է ստացվում, որով հնարավոր է լինում կազմակերպել այն **Դպրոցը**, որը պիտի աշխարհի բոլոր միջօրեականներով սփռված հայ պատանիների ոգին, միտքը, հայրենասիրությունը կոփելու դարբնոց դառնար:

...1834 թվականին Հնդկաստանում ապրող և որպես **մահարաջ** մեծարվող ահռելի հարստության տեր վաճառականներ **Սամուել Մուրադյանը և Էդուարդ Ռափայել Դարամյանը** կտակով **Մխիթարյան Միաբանությանն** են թողնում մի մեծ դրամագլուխ՝ աշխարհի տարբեր մասերից Իտալիա ուսանելու եկած հայ պատանիների համար մշտապես գործող վարժարաններ բացելու համար:

ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԵԼՅԱՆ ՎԱՐժԱՐԱՆ



Վենետիկի Մուրատ-Ռափայելյան
վարժարան

Սամուել Մուրադյան առաջին վարժարանը Մխիթարյան միաբանները հարմար գտան բացել Պադուա քաղաքում: 1836 թվականին Վենետիկում հիմնվում է նաև երկրորդ՝ **Ռափայելյան վարժարանը**:

Ավստրիացիների ճնշումից խուսափելու համար 1846 թվականին կրթօջախները միավորվեցին մեկ՝ **Մուրատ-Ռափայելյան** անվամբ և տեղափոխվեցին Փարիզ, իսկ 36

տարի անց հանգրվան գտնելով Վենետիկում՝ հաստատվեցին նրա **Կա' Չենոբիո** պալատում:

Չենոբիո ազնվական տոհմի սնանկացումը ստիպեց նրանց վաճառել իրենց սքանչելի նստավայր-պալատը, որը միաբանությունն իր **Մուրատ-Ռափայելյան վարժարանի** համար միանգամայն արժանի գտավ և գնեց այն:

Այս վարժարանը նույնպես ընդունում էր միայն հայ պատանիների, ովքեր գալիս էին Եվրոպայի և Միջին Արևելքի ամենատարբեր երկրներից:

Առաջին իսկ օրվանից վարժարանը եղել է ժամանակակից առաջադեմ դպրոց, որի վկայականը տալիս էր ցանկացած համալսարան ընդունվելու իրավունք:

Հետաքրքիր մի փաստ. դպրոց էին հաճախում տարբեր լեզուներով խոսող և զանազան օտար մշակույթներից եկած հայ պատանիներ՝ Հայաստանի տարբեր գավառներից, Իտալիայից, Անգլիայից, Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Պորտուգալիայից և էլի ուրիշ երկրներից, որոնք ապրում և ուսանում էին միասին, խոսելով իրենց գավառաբարբառներով՝ տարեսկզբին դպրոցը վերածելով իսկական խառնաշփոթի, որտեղ բոլորը խոսում էին հայերեն՝ գրեթե միմյանց չհասկանալով: Ուսումնառության կարճ միջոցից ինտո, նրանք բոլորը խոսում էին սքանչելի հայերենով, իսկ հիմա տարի սովորելուց հետո վարժարանն ավարտում էին, բացի մայրենիից, նվազագույնը երեք օտար լեզուների իմացությամբ:



Դպրոցում բացի միաբանության ուսուցիչներից, դասավանդում էին նաև աշխարհիկ ուսուցիչներ:

...19-րդ դարի Կա' Ձենոբիա պալատի **Մուրատ-Ռափայելյան վարժարանի** շքեղ սրահի համերգներն ու գիտաժողովները գրավում էին վենետիկյան բարձր հասարակությանը քաղաքագլխի հետ միասին, որոնք գալիս էին ներկա գտնվելու նաև վարժարանի սաների ավարտական վկայականների հանձնման արարողությանը և ըմբռնվելու սաների նվագախմբի և թատերախմբի միանգամայն բարձարվեստ համերգներն ու ներկայացումները:

Ի դեպ. վարժարանի «**Հայկական քայլերգ**» հիմնի հեղինակը Իտալիայում հայտնի երգահան **Ավրելիանոս Բոնձիլագուան** է: Ամեն միջոցառումից առաջ այս քայլերգը կատարում էր դպրոցի աշակերտական նվագախումբը:

Բոնձիլագուան վարժարանի ուսուցիչներից էր:


Մեծ ցանկություն ունենք տալ այն բոլոր ուսուցիչների անունները, հայ, օտար, կրոնավոր և աշխարհիկ, ովքեր այստեղ կրթել են հայության պատանի բեկորները: Բայց դա կժանրաբեռնի պատմությունը: Նույնը և բոլոր այն շրջանավարտների անունները, ովքեր տարբեր ժամանակներում, ամենատարբեր մասնագիտություններով օգտակար են եղել հայությանը:

Բայց մի՞թե Մխիթարյան միաբանները միայն **Մուրատ-Ռափայելյան վարժարանը** հիմնեցին: Իհարկե՝ ոչ: Մխիթարյանները դպրոցներ են բացել **Կարինի Կարմիր վանքում, Կոստանդնուպոլսի Ղալաթիա թաղամասում**: Նույն քաղաքում բացել են նաև **վեց նախակրթարան**: Դպրոցներ են հիմնել **Հունգարիայի** հայ գաղթավայրերում, **Պարտիզակում, Նիկոմեդիայում, Սավորայում, Ղարասու Բազարում, Տրապիզոնում, Սիմֆերոպոլում, Ախալցխայում, Մուշում, Մերդինում, Խարբերդում, Արթիկում**:

Մինչև 20-րդ դարի Առաջին համաշխարհային պատերազմը Մխիթարյաններն ամենուր գործող 26 դպրոց ունեին:

Մխիթարյան Միաբանությունը և նրա դպրոցները չէին կարող իրենց պարբերականը չունենալ:

1843 թվականից սկսեց լույս տեսնել հայագիտական «**Բազմավեպ**» հանդեսը, որն ահա գոյությունի ունի 162 տարի՝ որպես գիտությանն ու լուսավորությանը ծառայող «**առաջամարտիկ**»: Մինչև 1857 թվականը «**Բազմավեպը**» եղել է տնտեսական և բանասիրական երկշաբաթաթերթ, որը դյուրըմբռնելի աշխարհաբարով ընթերցողին էր հասցնում լուսավորական գաղափարներ և օգտակար խորհուրդներ՝ տնտեսական, քաղաքական և հոգևոր Հայոց վերածնման ուղիները նշելով:



«Քաղաքապետ» ամսագրի
անվանաթերթը

նականներ, գրողներ, արվեստագետներ: Հաճախ «Քաղաքապետը» լույս է տեսել որպես մեծարժեք բացառիկ համարներ՝ նվիրված **Դանթեին, Բայրոնին, Աստվածաշնչի** հայերեն թարգմանության 1500-ամյակին, **Նապոլեոնին, Մխիթար Սեբաստացուն**, հայ և համաշխարհային գրական ու պատմական այլ անդրադարձերին, հորեղանակներին:

«Քաղաքապետի» դերը Հայոց մշակույթի պատմության անդաստանում անգնահատելի է...

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



Վիեննայի Մխիթարյան միաբանությունը

Վիեննայի Մխիթարյան միաբանությունը ասել ենք արդեն, որ 1772 թվականին Ստեփանոս Մելքոնյանի արքայապետության ժամանակ, կանոնադրության փոփոխության կապակցությամբ անհամաձայնություն ծագեց Միաբանության անդամների միջև և **Ա. Բաբիկյանի** գլխավորությամբ մի խումբ միաբաններ հեռացան Սբ. Ղազարից:

Սկզբում, 1773 թվականին **Տրիեստ** քաղաքում, այնուհետև **Վիեննայում** հաստատվելով՝ պաշտոնապես ճանաչվեցին Ավստրիական կառավարության կողմից:

Նրանք իրենց կոչում էին **Մխիթարյաններ**:

Վիեննայում հաստատվելով՝ կառուցեցին տպարանի, դպրոցի, գրադարանի, թանգարանի շենքեր, իհարկե, նաև եկեղեցի:



Վիեննայի այս փողոցը կոչվեց **Մխիթարյան փողոց**:

...Վիեննայում հաստատված առաջին հայերը վաճառականներ էին, ովքեր 17-18-րդ դարերում Արևելքից այստեղ էին բերում Արևմուտքի համար զարմանալի ու գեղեցիկ ապրանքներ:

Բացի վաճառականներից՝ հայ համայնքում ապրում էին նաև արհեստավորներ և պետական պաշտոնյաներ, գլխավորապես՝ թարգմանիչներ:

Մխիթարյանների մի խմբի այստեղ հաստատվելուց հետո՝ գաղթավայրը դառնում է նաև մշակութային:

Վիեննայի հայ միաբանները նույնպես, ինչպես Սբ. Ղազարի միաբանները, լինելով կաթոլիկ, երբեք չեն մեղմվել այն հայ կաթոլիկ կղերին, որոնք հանում **«գաղափարների»** պատրաստ են եղել իրենց ճանապարհին ոչնչացնել ամեն սուրբ բան, նույնիսկ իրենց ազգային մտածողությունն ու արժանապատվությունը: Նրանք նույնպես, ինչպես Սբ. Ղազարի արժանավոր հայրերը, իրենց համառ աշխատանքով ժողովրդին վերադարձրել են նրա կողմից մոռացված, կամ, լավագույն դեպքում, մարող իմաստությունը: Այս քաղաքում հաստատված **Մխիթարյանները**՝ ևս անչափելի մեծ գործ են կատարել հայ մատենագրության հավաքման, խմամքով պահելու, ուսումնասիրելու և հրատարակելու գործում: Հայագիտական ուսումնասիրություններով նրանք իրենց անուրանալի մեծ նպաստն ունեն հայ ժողովրդի ճանաչման ու ինքնագիտակցության բարձրացման գործում, որով և խոչընդոտել են սփյուռքի հայության ծուլմանը:

Նրանք ջանացել են օտար ափերում հային հայ պահել, մատենագիտական հազվագյուտ գործերի միջոցով եվրոպական ժողովուրդներին ըստ պատշաճի ներկայացնել և համաշխարհային հռչակի բազմաթիվ դասական ստեղծագործություններ թարգմանելով՝ նրանց ճանաչել տալ հայերին:

Վիեննայի **Մխիթարյան** հայրերը նաև ուսուցիչներ էին: Նրանք իրենց առանձին դպրոցը բացեցին **Վիեննայում**, ապա **Ջնյուռնիայում**, **Տրիեստում**, **Կոստանդնուպոլսում**, որտեղ կարևորվում էր հայագիտական առարկաների և լեզուների դասավանդումը: Այս դպրոցներն ավարտած սաները ևս տիրապետում էին մի քանի լեզուների, լավատեղյակ էին Հայոց մատենագիտությանը և, անկասկած, սքանչելի գիտեին հայերեն իրենց մայրենի լեզուն:

Վիեննայի հայրերի **տպարանը** ամենահարուստ տպարաններից մեկն էր Արևմտյան Եվրոպայում: Այս տպարանում տպվել են ոչ միայն հայերեն, այլև հազարավոր գրքեր ամենատարբեր լեզուներով: Տպարանի եկամուտները թույլ էին տալիս պահել գիշերօթիկ դպրոցներ, որտեղ սաները ապրուստի և կրթության համար չէին վճարում:

Սքանչելի է **Վիեննայի Մխիթարյանների 1500 ձեռագրերի հավաքածուով Մատենադարանը**, որտեղ պահվում են համաշխարհային արժեքի շատ մատյաններ: Այստեղ կարելի է գտնել նաև ամենատարբեր ժամանակների, ամենատարբեր պարբերական մամուլի հազվագյուտ հավաքածուներ:




Ինչպես **Սր. Ղազարի**, այնպես էլ **Վիեննայի Մխիթարյանների Թանգարանը** արժանի է համարվելու եվրոպայի լավագույն թանգարաններից մեկը: Այստեղ ցուցադրվում են հանքաբանության, բուսաբանության, կենդանաբանության և գիտության այլ բնագավառների հավաքածուներից մինչև... եգիպտական մումիաներ, հին հունական, հռոմեական, միջնադարյան եվրոպայի արձաններից մինչև հայկական ստեղծագործ մտքի ընտիր նմուշներ և համաշխարհային արժեքի տաղանդավոր գեղանկարիչների կտավներ:

Թանգարանը նաև հին դրամների արժեքավոր հավաքածուի պահոց է, որը մինչև հիմա մրցում է աշխարհի դրամական մեծագույն հավաքածուների հետ: Անչափ հետաքրքիր ու արժեքավոր է հայկական դրամների հարուստ հավաքածուն:

Վիեննայի Մխիթարյանների դրոշմով հրատարակված հայ առաջին պարբերականներից մեկը **«Ծանուցմունք վաճառականութեան»** ամսագիրն էր, որը, սակայն, կարճ կյանք ունեցավ:

Մյուսը **«Եվրոպա»** շաբաթաթերթն էր քաղաքական լուրերի, գիտական ու բանասիրական հոդվածների հրապարակումներով, որը անգնահատելի դեր կատարեց արևմտահայ գրական լեզվի մշակման գործում:

1887 թվականին **Վիեննայի Մխիթարյանները** սկսեցին հրատարակել **«Հանդես Ամսոյա»** ամսագիրը:



«Հանդես Ամսոյա» ամսագրի անվանաթերթը

«Հանդես Ամսոյան» Միաբանության պաշտոնաթերթն էր: Նրա էջերում տպագրված բոլոր ուսումնասիրությունները **«Ազգային Մատենադարան»** մատենաշարով լույս էին տեսնում առանձին գրքույկներով, որոնք հիմա 239 հատոր են:

Այս գրքերի շարքում են **Հայր Համազասպ Ոսկանի «Պատմական Հայաստանի վանքերը»** և **Հայր Միքայել Հովհաննիսյանի «Հայոց բերդեր»** կոթողային աշխատանքները:

«Հանդես Ամսոյան» հրատարակվում է մինչև այսօր, և հույս ունենք, որ շարունակվելու է հրատարակվել դեռ երկար... և շարունակելու է հետևել մշակութային իր կարևոր առաքելության կատարմանը՝ միջնադարյան հայկական բնագրերը հրատարակելու, ուսումնասիրելու, աղբյուրա-

գիտական հարցեր լուծելու և իր էջերը ժամանակի մեծատաղանդ հայագետներին տրամադրելու գործում:

Վիեննայի Մխիթարյան Միաբանության սքանչելի հայագետներից էր **Հովսեփ**



Գաթրջյանը: Նա առաջին անգամ հունարենից հայերեն թարգմանեց **Քսենոփոնի «Կյուրոպեդիա»**, լատիներենից՝ **Ցիցերոնի** և այլ դասական հեղինակների գործեր, գրեց իր նշանավոր **«Տիեզերական պատմություն»** երկիատորը:

Նույնքան կարևոր է և մեծարժեք լեզվաբան **Հայր Այտնյանի «Քննական քերականություն արդի աշխարհաբար լեզվի»** աշխատությունը՝ բաղկացած 1000 մեծադիր էջերից: Այս աշխատությունը համարվում է Հայոց քերականության լավագույն ուսումնասիրություններից մեկը, որը մեծ դեր է ունեցել **աշխարհաբարի** հաստատման գործում և նպաստել նոր գրական հայերենի զարգացմանը:

Հայր Տաշյանը հայտնի է որպես մեծ աղբյուրագետ, որի կազմած **Վիեննայի Մխիթարյանների Մատենադարանի** ձեռագրերի ցուցակը իր հարստությամբ և մանրամասնությամբ մնում է չգերազանցված մինչև այժմ կազմված հայկական բոլոր ձեռագրերի ցուցակների մեջ:

Նա նաև գրել է հայ հնագրության մասին առաջին դասագիրքը՝ **«Ակնարկ մը հայ հնագրության վրա»** խորագրով, ինչպես և հեղինակ է հայագիտական բազմաթիվ այլ փայլուն ուսումնասիրությունների:

Հայր Սիպիլյանը առաջին հայ դրամագետն է, որ մշակել ու դասակարգել է հայկական **«Կիլիկյան դրամներ»** հարուստ հավաքածուն:

Հայր Ակինյանը հայ բանասիրության ականավոր դեմքերից է, ում ջանքերով հայտնաբերվել և գիտությանն է մատուցվել ժամանակի երախում կուլ գնացած բազմաթիվ պատմիչների, ժամանակագիրների, տաղերգուների մոռացված անուններ: **Հայր Ակինյանը** կազմել է նաև ձեռագրական ժողովածուների ցուցակներ: Հայագիտությունը նրան է պարտական հարյուրավոր բանասիրական-աղբյուրագիտական կնճռոտ հարցերի լուսաբանումն ստանալու համար:

Հայր Ակինյանի բանասիրական աշխատանքներն ամփոփվում են ավելի քան չորս հարյուր լույս ընծայված գրքերում և հոդվածներում:

Հայր Ոսկյան. հեղինակ մի քանի հարյուր հայագիտական ուսումնասիրությունների: Նրա մեծարժեք գործերից է հայ գրչության օջախներին նվիրված **ուսումնասիրությունների** շարքը: Նա ամենայն բարեխղճությամբ հրատարակել է նաև Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի ձեռագրերի ցուցակի երկրորդ հատորը:

Ինչպես Սբ. Ղազարի 300-ամյա Միաբանության, այնպես էլ 250-ամյա Վիեննայի Միաբանության ահռելի աշխատանքը մի քանի տողի մեջ ամփոփելը պարզապես աններելի է, եթե ավելի խիստ չորակենք մեր անփույթ ու ցաքուցրիվ տեղեկությունները: Մի՞թե կարելի է մի քանիսի անունները տալով և մյուսներինը չտալով, նրանց ահռելի գործը կիսատ-պռատ թվարկելով՝ փորձել ներկայացնել



և՛ Վիեննայի, և՛ Սբ. Ղազարի միաբանությունների կատարած գործը, որի անունը մի բառով կոչվում է **Հայրենասիրություն**: Հայրենասիրություն, որը բխում է ազգային հզոր Արժանապատվության խորին գիտակցումից, նրա ուրախությունների, խիզախումների, Ոգեղեն Վերածննդի հանդեպ ունեցած հույսի աներկբայելի հավատից և օտարների լծի տակ կեղեքվող Հայրենիքի հանդեպ անտարողունակ, անպարագիծ **Սիրուց**:

Այս համեստ, իմաստուն հայ կրոնավորները, ծվարած օտար երկնքի տակ, իրենց կարոտի ընդերքից առնելով **Հայրենասիրության** հզոր ներշնչանքը, իրենց երեքհարյուրամյա փորձառությունն են կտակել մեզ: Հոգևոր ու նյութական մշակույթի հզոր փարոս են եղել նրանք իրենց ժամանակի Հայոց համար և **մեր ժամանակի** համար նույնպես: Նրանք երբեք չեն դադարի այդպիսին լինելուց: Նրանց խանդավառ հոգիները երբեք չկասկածեցին, որ իրենց առաքելությունը օրհնված է **Արարչից**:

ՎԵՐԱԴԱՐՁ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

Ես չգիտեմ ինչո՞ւ, երբ մտածում եմ այս հոգևոր հայրերի մասին, նրանց չեմ տեսնում փակված իրենց խցերում, որոնք մի ժամանակ բորոտների պառկելատեղեր էին: Ես չեմ տեսնում նրանց գրադարանում կամ դպրոցում: Չեմ տեսնում իրենց աշխատությունների վրա կռացած տքնելիս և ոչ էլ տեսնում եմ եկեղեցում պատարագ մատուցելիս, ժամերգելիս ու աղոթելիս... Ես նրանց, այդ սևազգեստ կրոնավորներին, որոնց մեջ կային և պատկառելի ծերեր, տեսնում եմ ցայգալույսին դեռ ցողը վրան վարդի թերթեր հավաքելիս և վարդի անուշ եփելիս... Եվ իմ սիրտը լցվում է տաք խանդաղատանքով... Նրանք հետո իրենց եփած վարդի անուշը պիտի իմաստուն զրույցների հետ մատուցեն կղզի այցելած որևէ մեկին և բացատրեն, թե վարդի անուշը **Հայաստանյան հիշողություն է**, թող բարով համտեսեն... որ զգան հեռավոր, անծանոթ երկրի համը, որը **«Երբեմն բյուր փառաց տեղիք, հիմա դամբան է»** և որի **«նվաստ և անարժան» զավակներն ու ծառաներն են...»**:

Նվաստ և անարժան նրանք՝ **Ոգու այդ հզոր քրմերը**: Նրանցից մեկն, ահա՛ Հայր Ինճիճյանը:

ՀԱՅՐ ՂՈՒԿԱՍ ԻՆՃԻՃՅԱՆ

Աշխարհագրագետ, պատմաբան, բանասեր: Նա պատմական աղբյուրները, վավերագրերը ուսումնասիրելուց հետո ճամփորդում է Հայաստան Աշխարհով՝ ճանաչելու, տեսողությամբ փաստելու և բացատրելու համար Լեռնաշխարհի հարազատությունը, Լեռնաշխարհի մտերմությունն իր հոգու, իր մտքի, իր էության հետ և հայրենիքի հանդեպ իր ողջ զգացողությունն ու ապրումները, գիտական վերլուծումների հետ ժառանգություն թողնելու համար սերունդներին **«Ստորոգութիւն Հին Հայաստանեաց»** և **«Հմախօսութիւն աշխարհագրական Հայաստանեաց Աշխարհի»** զույգ կոթողային աշխատությունները:



Առաջինը Հայաստանի պատմական 15 նահանգների նկարագրությունն է, գավառների աշխարհագրական կարևոր տեղեկություններով:

Երկրորդ եռահատորը քննական ու գիտական խորագույն ուսումնասիրության արդյունք է բովանդակ Հայաստանի աշխարհագրության, նախաբարությունների, բանակի, վաճառականության, օրենքների, սովորույթների, լեզվի, արվեստի, մի խոսքով՝ այն ամենի, որով եղել է և կա հայ ժողովուրդը:

Հայր Ինճիճյանը մասնակցել է նաև **Հայր Ազոնց Գյուվերի «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի»** բազմահատորի ստեղծման աշխատանքներին, որի՝ Ասիային նվիրված «**Նոր Հայաստան**» հատորի հեղինակն է, որտեղ աշխարհագրական տեղեկություններ են տրված Փոքր Հայքի, Միջագետքի, Կիլիկիայի, Խաղտիքի, Ատրպատականի, Աղվանքի և էլի շատ վայրերի մասին:

Բայց, իհարկե, նրա «**Հմախօսութիւն աշխարհագրական Հայաստանեաց Աշխարհի**» եռահատորը **Հայր Միքայել Չամչյանի «Հայոց պատմութիւն»** եռահատորից հետո առաջին ծավալուն երկն է Հայոց մասին:

Կասկած չկա, որ աշխարհագրությունը **Հայր Ինճիճյանի** սիրելի ասպարեզն էր, այնքան, որ կարող էր չափածո բնութագրել Բոսֆոր և Դարդանել նեղուցները, տալ նրանց ջրային հոսանքների գիտական բացատրությունը, նաև՝ երկրաբանական անցյալի պատմությունը:

Նրա ութ հատորանոց «**Դարապատում**» աշխատությունը նվիրված է 1750–1800 թվականների պետությունների քաղաքական աշխարհագրությանն ու պատմությանը: Վերջին երկու հատորները ամփոփում են գիտության ու արվեստի մեծ մտածողների, արվեստագետների, եկեղեցական գործիչների կյանքն ու ստեղծագործության պատմությունը: Նույնիսկ նվազ երևակայություն ունենալով կարելի է պատկերացնել այն հսկայածավալ նյութը, որը տեղ է գտել այս ութհատորյա աշխատության մեջ:

Հայր Ղուկաս Ինճիճյանը իր տուրքն է տվել նաև աշխարհաբարին: «**Տաղերգութիւն**» և «**Եղանակ Բյուզանդեան**» տարեգրքերը հրատարակել է աշխարհաբարով՝ լուսաբանելով աշխարհի քաղաքական իրադարձությունները, կրոնական, ուսումնական, գիտական, բանասիրական հարցեր, եղանակի տեսություններ և կանխագուշակումներ:

Բայց այսքանով չի սպառվում սքանչելի **Հայր Ինճիճյանի** գործը: Նա Կոստանդնուպոլսում հիմնում է «**Արշարունյաց ընկերություն**» գրական–հասարակական կազմակերպությունը, ապա գրում «**Ազգասեր**» հրապարակախոսական աշխատությունը, որը սարսափելի զայրացնում է թուրքական կառավարությանը, այնպես, որ փակում են «**Արշարունյաց ընկերությունը**»:

Հայր Ինճիճյանը գիտեր՝ իր ժողովրդին ինչ է պետք: Նրան հոգևոր, մտավոր, բարոյական զարթոնք էր պետք: Պետք էր, որ նա սթափվի իր ճորտական թմբիրից, որովհետև, ինչպես հավաստում էին Մխիթարյանները, հայ ժողովուրդը դեռ երկար ճանապարհ ունի անցնելու **Ժամանակի վայրիվերումների** միջով, իսկ այդ վայրիվերումներին դիմանալու համար նա պետք է սթափ լինի հոգով, գիտակ լինի մտքով, տեր լինի իր նախնի բարոյական ըմբռնումներին:



Մխիթարյան հայրերը և նրանց հետ Հայր Ինճիճյանը, իրենց մտավոր ու հոգևոր գանձերով ժառանգություն են թողել այս կարևոր գիտակցությունը:

Մխիթար Սեբաստացի վարդապետի ազգային վերանորոգումի ծրագիրը պիտի ունենար իր նվիրյալներին: Նվիրյալների այդ փառանգի մեջ էր նաև Հայր Ներսես Սարգսյանը իր «Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս» մեծահատոր աշխատությամբ: Այն պարունակում է ազատագրական մանրագնին նկարագրություններ, որոնք քաղել է ոչ միայն նախկին ուսումնասիրություններից, այլ նաև ճամփորդել Զնյուռնիա, Տրապիզոն, Մուշ, Թիֆլիս, ապա և այցելել Հայաստանի բոլոր անկյունները՝ որպես եվրոպացի լրտես, ենթարկվելով ահռելի դժվարությունների, թուրքերի հալածանքին, սակայն, արժեքավոր և անկրկնելի տեղեկություններ հավաքել գավառների հայության, վանքերի և ձեռագիր մատյանների, հարստությունների մասին, առանց որոնց անհետ պիտի կորչեին բազմաթիվ արժանագրություններ, վիճակագրական տվյալներ, ձեռագրեր, որոնք անձամբ ընդօրինակելով, փրկել է հետագայում հրկիզումներից ոչնչացած մատյանների բովանդակությունը:

Իր տեսակի մեջ անկրկնելի է նաև Հայր Հովհաննես Թոմաճանյանի «Ուղեւորութիւն» հսկայածավալ գիրքը իր 324 նկարներով, ուր հարուստ տեղեկություններ կան Հայոց սփյուռքի գաղթօջախների մասին:

Իսկ Հայր Եփրեմ Սեթյանի «Ուղեւորութիւն» գիրքը Երզնկայի, Էրզրումի նահանգից, կոտորածների վայրերից ռուսական զորքերի հետ դեպի Ալեքսանդրապոլ ու Զավախք տասնյակ հազարավոր հայ գաղթականների հեռաճառն ապատմությունն է:

Հիշենք նաև Հայր Մանուել Քաջունու աշխարհաբար, ժողովրդական լեզվով գրված «Ի Պետս դպրոցաց» և «Աշխարհագրութիւն Հին ու Նոր Հայաստանեաց» դպրոցի տղաների համար դասագրքերը:

ԳԱՐՐԻԵԼ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ



Գաբրիել Այվազովսկի

Մի քանի խոսք Հայր Գաբրիել Այվազովսկու մասին: Նա գրել է «Պատմութիւն Ռուսաց» և «Պատմութիւն Օսմանեան պետութեան» հատորները:

Հայր Գաբրիել Այվազովսկին պատմաբան, թարգմանիչ, եկեղեցական գործիչ, մանկավարժ էր: Նա եկել էր Ղրիմի Թեոդոսիա քաղաքից, Մխիթարյանների մոտ ձեռնադրվելով վարդապետ՝ ստանձնել է ճեմարանի փոխտփայության և աստվածաբանության ուսուցչի պաշտոնը, միաժամանակ վարել Միաբանության ընդհանուր քարտուղարի գործերը: Հայր Գաբրիել Այվազովսկին դասավանդել է նաև Վենետիկի Ռափայելյան վարժարանում, խմբագրել է «Բազմավեպը», իսկ հետո Փարիզում Մ. Թեոդորյանի և Ա. Գալֆայանի հետ հիմնադրել ու ղեկավարել Հայկազյան վարժարանը, ապա հրատարակել «Մասյաց աղավնի» ամսագիրը:



Ինչ—ինչ պատճառներով **Հայր Գաբրիել Այվազովսկին** հրաժարվում է կաթոլիկ դավանանքից և վերադառնում լուսավորչական եկեղեցու գիրկը: Նա վերադառնում է Ռուսաստան և նշանակվում Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմակալ: Թեոդոսիա իր ծննդավայրում հիմնում է **Խալիբյան վարժարանը**: Էջմիածնում ծեռնադրվում է եպիսկոպոս, ապա արքեպիսկոպոս և **Գևորգ Չորրորդ կաթողիկոսի** հրավերով կարգվում **Գևորգյան ճեմարանի** տեսուչ: Երբ 1876 թվականին վախճանվեց՝ Թիֆլիսի թեմական առաջնորդն էր:

Բացի վերևում նշված գրքերից, **Հայր Այվազովսկին** գրել է նաև «**Պատմություն Խալիպեան ուսումնարանին ազգիս Հայոց**», «**Ուղղագրություն լեզուիս Հայոց**», «**Նախակրթանք հայերեն լեզու**», «**Ընթերցարան լեզուին Ռուսաց**» գրքերը:

Տիրապետել է նաև եվրոպական և արևելյան 12 լեզուների և այդ լեզուներից բազմաթիվ թարգմանություններ կատարել, ինչպես նաև հայերենից այդ լեզուներով թարգմանել **Մովսես Խորենացու և Ագաթանգեղոսի «Պատմությունները»**:

Գաբրիել Այվազովսկին իր ողջ կյանքը նվիրաբերել է ազգի առաջադիմությանը՝ կոչելով նրան ազգասիրության և միաբանության: Նա չէր ընդունում քաղաքացիական պատերազմը, ապստամբությունը, հեղափոխությունը, որը երկպառակտում էր ազգը: Այս պատճառով նա անխնա քննադատվել է **Միքայել Նալբանդյանի, Ս. Ոսկանի** և ուրիշ դեմոկրատ մտածողների կողմից: **Գաբրիել Այվազովսկին** ապրել է Փարիզում և խորաթափանց իր մտքով ճանաչել ֆրանսիական հեղափոխության ներքին, խորը հակասությունները: Բայց Ֆրանսիան դարեր շարունակ կազմակերպված պետություն էր... Իսկ Հայաստանը: Այս հարցի պատասխանը գուցե գտնենք հետագա ժամանակներում:

Այն, ինչ արել է **Գաբրիել Այվազովսկի հայը**, անուրանալի արդյունք է հանուն հայ դպրության, հայ մշակույթի, հանուն ազգային արժանապատիվ իմացության: Եվ այս բոլորը ջնջել ու նրան որակել որպես «**հետամնաց կղերական**»... Երանի թե բոլոր հայ «**դեմոկրատ առաջամարտիկները**» անեին իրենց ժողովրդի համար այն, ինչ արել է այս «**հետամնաց կղերականը**»:

Ի դեպ. **Գաբրիել Այվազովսկի** մտավորականը և **Հովհաննես Այվազովսկի** ծովանկարիչը հարազատ եղբայրներ էին:

Մենք դեռ կհանդիպենք նրան՝ հայ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկուն, և կպատմենք նրա սքանչելի տաղանդի մասին: Հիմա դեռ **Մխիթարյան հայրերի** մասին է մեր զրույցը:

ՀԱՅՐ ՄԻՆԱՍ ԲԺՇԿՅԱՆ

Հայր Մինաս Բժշկյանը ծնվել է Տրապիզոնում, եկել Սբ. Ղազար, դարձել **Մխիթարյան Միաբանության** անդամ, ուսուցիչ եղել կղզու ճեմարանում և Մխիթարյան Միաբանության դրսի դպրոցներում, ուր և ծավալել է... թատերական գործունեությունը:

Հայր Մինաս Բժշկյանը մանկավարժ էր, պատմաբան, ազգագրագետ, երաժշտագետ, և իր ժողովրդին, նրա առաջընթացին ծառայել է անմնացորդ նվիրումով:



Մինաս Բժշկյան

Բարձրարժեք են նրա «Ճեմարան գիտելոց», «Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեաւ ծով», «Քերականութիւն ռուսերէն—հայերէն» աշխատությունները: «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» ուղեգրության մեջ նա անգնահատելի վկայություններ է թողել և ամբողջացրել Անի քաղաքի և նրա բնակիչների Լեհաստան գաղթելու մասին տեղեկությունները, օգտագործելով ոչ միայն պատմիչների թողած վկայությունները, այլև Անիի և Շիրակի պատմական հուշարձանների արձանագրությունները: Հնագիտական, ազգագրական տեղեկություններ է հաղորդել 19-րդ դարի Լեհաստանի, Բուլղարիայի և Ուկրաինայի հայաբնակ վայրերի, հայերի կենցաղի, ազգային սովորույթների, դատավարության, եկեղեցական բար-

քերի, վանքերի և այլ հուշարձանների մասին:

Նրա գիտական հետաքրքրությունների ոլորտում են եղել նաև ազգային երգարվեստի, միջնադարյան խազագրերի և հայկական ծայնագրության նոր համակարգի խնդիրները: Գրել է «Երաժշտութիւն, որ է համառօտ տեղեկութիւն երաժշտական սկզբանց և ելևէջութեանց եղանակաց և նշանագրաց խազեր» երաժշտագիտական աշխատությունը:

Հայր Մինաս Բժշկյանը սիրում էր իր ուսուցչական գործը, սիրում էր գիտությունն ու պատմությունը: Կրոնավոր էր մյուս կրոնավորների նման, բայց գիտեր գնահատել թատրոնի և երաժշտության դերը պատանիների դաստիարակության գործում:

Մխիթարյան Միաբանության զույգ՝ Սբ. Ղազարի և Վիեննայի հաստատությունները երեքհարյուրամյա իրենց գոյությամբ տվել են հարյուրավոր անուններ, որոնք մեծ կամ փոքր իրենց նպաստն են բերել հայ ժողովրդի մտավոր ճաշակի ծաղկումին: Նրանց բազմաթիվ դպրոցներում սովորել և ասպարեզ են մտել աշխարհիկ իրենց սաները, ովքեր ամենաբազմաբնույթ, ոչ կրոնական գործունեությամբ եղել են ճշմարիտ թարգմանը բարոյական, իմացական, գործնական կյանքի:

Մխիթարյան հայերը 300 տարի շարունակ Հայոց մտքի և հոգու բարձրագույն թարգմանն են եղել... Խորին խոնարհում նրանց Գործին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մխիթար Սեբաստացի Աբբահոր սկսած վերածննդի մեծ շարժումը չէր կարող շրջանցել քարտեզագրությունը՝ որպես մշակույթի, պատմության, աշխարհագրության, ի վերջո՝ Հայրենիքի ֆիզիկական տեսանելին մատչելի դարձնելու անչափ կարևոր մի ասպարեզ:



Նախ, դեռ նոր սկսած հրատարակության առաջին իսկ գրքերից՝ Աստվածաշունչ և մեր հին պատմիչների, այնուհետև միջնադարյան լավագույն բանաստեղծների ստեղծագործությունները, ջանացին տպագրել նկարագարողունակ՝ ապահովելու համար գրքերի նաև գեղագիտական տպավորությունը: Կարևորվում էր հատկապես տպագրության ընձեռած հնարավորություններն օգտագործելով՝ **Հայոց Մեծերի** դիմանկարները ներկայացնելը, որ նրանք կարողանան *«...թափանցել ամեն հայ օջախի մեջ, արթնացնելու նպատակով մոխրի տակ թաքուն մնացած պապերուն կերպարներ...»:*

Սակայն այս մասին չէ, որ ուզում ենք խոսել, որովհետև այս նյութը մի ողջ հատոր առանձին ուսումնասիրություն կարող է լինել:

Մեր զրույցն այժմ քարտեզագրության մասին է, որի համար տեղեկություններ կքաղենք **Հայր Սահակ Վարդապետ Շենճյանի «Քարտեզագրութեան դպրոց մը Սբ. Ղազարու մէջ ԺԸ դարերու»** գրքից:

Հիշո՞ւմ եք. հայերեն լեզվով առաջին քարտեզը Ամստերդամում 1695 թվականին տպագրեց **Թովմաս Վանանդեցին**: Այն խնամքով փորագրված էր ութ պղնձե թերթերի վրա:

Այս ութ կտոր պղնձե թերթերը **Հայր Զաքարիա Ալեքսանյանը** գտնում է Կոստանդնուպոլսում մի հայ այրի տիկնոջ մոտ, որից և հաջողվում է գնել այն և ուղարկել Սբ. Ղազար 1753 թվականին: Եվ մինչև 1782 թվականը հայերեն քարտեզագրությունը տպագրվում էր այս թերթերով... Այն բավական մեծ պահանջարկ ուներ Ասիայի և Եվրոպայի հայ գաղթօջախներում:

Ավելի ուշ, երբ Սբ. Ղազարի տպարանը լույս է ընծայում ավելի շքեղ և մասնագիտացված քարտեզներ՝ Վանանդեցու առաջին հայերեն այս քարտեզների հետքերը կորսվում են: Երևի դրանք գտնվում են ինչ—որ մի տեղ, ինչ—որ գրադարանի մի գրադարակի հեռավոր անկյունում....

Այժմ Սբ. Ղազարի դիվանում պահվում են այս քարտեզի չօգտագործված երեք անձեռնմխելի օրինակներ:

...Երբ **Արքահայր Մխիթար Սեբաստացին** Աստվածաշնչի հրատարակության համար 156 պղնձատիպ պատկերներ պատրաստել տվեց, մեծ գումարներ ծախսեց: Երկու միաբաններ պետք է զբաղվեին գեղարվեստական ձևավորմամբ: Քանի որ պղնձատիպ պատկերները դրսում պատվիրելը մեծ վնաս էր հասցնում վանքի տնտեսական վիճակին, Միաբանությունում որոշեցին մասնագիտանալ նաև փորագրության ասպարեզում:


Հայր Իգնատիոս Խաչատուրյանն ու **Հայր Զաքարիա Ալեքսանյանն** էին, որ պղնձափորագրության արվեստով նոր էջ բացեցին Սբ. Ղազարի մշակութային պատմության մեջ:

Երկու հայրերն էլ սիրում էին փորագրել զանազան պատկերներ և տեսակ—տեսակ ծաղիկներ, սակայն նրանց տարերքը քարտեզներ փորագրելն էր:

1751 թվականին լույս տեսավ **«Բովանդակ Հայաստանեաց»** չորս պատկեր, որոնք զետեղվեցին **Մխիթար Սեբաստացու «Հայկազեան բառագիրք», «Երկիր**



Աւետեաց», «Համատարած Աշխարհացոյց» գրքերում, ապա նաև զույգ «Քարտեզներ», որոնք պատկերում էին մոլորակների ընթացքը և աստղային երկինքը: Այս զույգ քարտեզները Ջաքարիա Ալեքսանյանի ծեռքի գործերն էին, իսկ Հայր Իգնատիոս Խաչատուրյանի հեղինակությամբ լույս է տեսնում «Աշխարհացոյց Հայաստանեաց ըստ Հին ու Նոր Աշխարհագրաց» քարտեզը:



Մխիթար Սեբաստացի. «Աստղալից երկինք»

1778 թվականին լույս է տեսնում մի նոր «Աշխարհացոյց Հայաստանեաց» շքեղ, բավական մեծ քարտեզ, որը մինչ այս տպված քարտեզների թագն ու պսակն էր: Քարտեզի ստորին կենտրոնում գտնվում է զարդանկար ավանդացույցը՝ ճոխացած զանազան դրոշակներով, զենքերով: Այստեղ է **Հայկն** իր աղեղով, **Արամը**՝ ծեռքին Հայաստանի քարտեզը բռնած, **Տիգրան Մեծը**՝ արքունի մականով և **Տրդատ թագավորը**: Մի խոսքով, քարտեզն արտահայտում էր տպագրիչների՝ անցյալի հանդեպ ունեցած հպարտությունը և ներկայի հանդեպ՝ հավատը:

Քարտեզի մեկենասն էր Հնդկաստանի Մադրաս քաղաքի մեծահարուստ **Շամիր Սուլթանյանը**:

Աբ. Ղազարում որպես փորագրիչ-նկարիչ իր բացառիկ տաղանդով հայտնի էր նաև **Հայր Եղիա Էնտազյանը**:

1785 թվականին **Հայր Եղիայի** փորագրած զույգ աշխարհացույց պատկերները հիացմունք են պատճառում մինչ այժմ:

Այս տարիներին լույս տեսած գրեթե բոլոր գրքերի պատկերները պատկանում




են Հայր եղիա Էնտազյանին: Նրան է պատկանում մահ Հայր Միքայել Չամչյանի «Հայոց պատմութիւն» եռահատորի առաջին հատորի վերջում գետեղված «Գաւառք Հայաստան աշխարհի ըստ պատմութեանց» քարտեզը:

Հայրէնտազյանը հեղինակել է մահ «Համառօտ պատմութիւն օդապարիկ գտոց» գրքի չորս աշխարհամասերին նվիրված առանձին-առանձին «Եւրոպա-Ափրիկէ-Ամերիկա-Ասիա» ապա՝ «Լայնածաւալ Տէրութիւն օսմանցոցն» քարտեզները:

Հայր եղիա Էնտազյանը վախճանվեց 1789 թվականին 34-ամյա հասակում, և հայ փորագրության արվեստը կորցրեց իր մեծ վարպետին:

Անշուշտ, հետագայում ևս Հայոց քարտեզագրությունն անընդհատ ապրում է իր վերելքը՝ իր կատարելությամբ բնավ չզիջելով եվրոպական մակարդակին:

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ



Ղևոնդ Ալիշան
1820–1901 թթ.

Նրա սիրտը դադարեց բաբախելուց՝ տանելով կարճատև մի տագնապ 1901 թվականի նոյեմբերի 9(22)-ին: Իր մահկանացուն կնքեց *«Նոճիի նման ուղղահայաց ու նուրբ հասակով, հերապանծ գլխով ու Ապոլոնյան ճակատով, խոշորագեղ ու անուղղահայաց աչքերով, Մելպոմենեական անուշ գիտությամբ մեկ կողմեն և մյուս կողմեն ալ անմեղության ժպիտով օժտված դեմքով, ժլատ բառ ու բանի, բայց ոչ խելացի խորհուրդներու մեջ, խոկումնալից և զգացմունքների մեջ ընկղմված լռությամբ»:*

Ջարմանալի, հրաշալի, բացառիկ Ղևոնդ Ալիշան, որ *«...դարուս հայկական հանձարի ներկայացուցիչն է: Իբրև բանաստեղծ՝ բոլոր բանաստեղծների Նահապետն է, իբրև եկեղեցական՝ մի Ենորհալի, իբրև գիտնական՝ մի հանրագետ»:*

Կարելի՞ է գրել Ղևոնդ Ալիշանի մասին այնպես, որ մահաբեր իր ողջ մտավոր, հոգևոր ամբողջությամբ, իր էության զարմանալի նրբերանգներով, իր մտածումների ու երազանքների անսահմանությամբ, իր անպարագրելի Սիրո ու Բարության թեկուզ չնչին մեր ճանաչումով:

Ալիշանյան Քերովբե Պետրոս-Մարգարի՝ Ղևոնդ Ալիշանը, ծնվել է 1820 թվականի հուլիսի 6-ին, Կոստանդնուպոլսում, դրամագետ-հնագետի ընտանիքում: Կրթություն ստանալով Չալքիսյան վարժարանում՝ մեկնում է Վենետիկ, Մխիթարյան Միաբանության դպրոցում շարունակելու ուսումը:

Քերովբե Ալիշանյանի հայրը՝ Պետրոս-Մարգարը, Կարին քաղաքից էր: Նա հետո տեղափոխվել էր Կոստանդնուպոլիս, որովհետև այդ ժամանակ այս քաղաքը իրեն էր ձգում շատ հայերի, ովքեր ցանկություն ունեին կամ հուսով էին, թե այստեղ ավելի շուտ կհասնեն հաջողության: